Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

25-26(315-316)
27.08.2012թ.
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Լусарар ● ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

ԼՂՀ հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների նախնական զինվորական պատրաստության պետական ծրագրի պահանջներն արդյունավետ իրականացնելու, զինվորական ղեկավարների և ՆԶՊ դասատուների մասնագիտական ու մեթոդական պատրաստության մակարդակը բարձրացնելու և նրանց մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով ԼՂՀ կրթության և գիտության ու պաշտպանության նախարարությունների համատեղ հրամանով Ն զորամասի նյութատեխնիկական բազայի վրա օգոստոսի 22-24-ը անցկացվեցին զինղեկների ուսումնամեթոդական հավաքներ՝ շուրջ 225 հոգու մասնակցությամբ:

Ըստ ԼՂՀ ԿԳՆ ռազմահայրենասիրական, ֆիզդաստիարակության, հասարակական կազմակերպությունների հետ կապերի բաժնի վարիչ Վալերի Գրիգորյանի, հավաքների նպատակն է՝ կատարելագործել նախնական զինվորական պատրաստության ուսումնական գործընթացի կազմակերպման հետագա բարելավման գործում զինղեկների տեսական գիտելիքներն ու հմտությունները, ձևավորել նրանց կողմից ՆԶՊ պարապմունքների անցկացման և ռազմահայրենասիրական դաստիարակության միջոցառումների կազմակերպման գործում միատեսակ մոտեցումներ, տալ ՆԶՊ պարապմունքների անցկացման առավել կատարյալ ձևեր ու մեթոդներ, ստուգել հավաքի մասնակիցների մասնագիտական պատրաստության մակարդակը: Հավաքի մասնակիցներին ողջույնի խոսք են ասել ԼՂՀ ՊԲ ԱՀՏԱ գծով հրամանատարի տեղակալ, գեներալ-մայոր Անդրանիկ Մակարյանը և ԿԳ փոխնախարար Սլավա Ասրյանը:

Գեներալ-մայոր Ա. Մակարյանը կարևորել է զինվորական մանկավարժի դերն ու նշանակությունը, հատկապես հիմա, երբ փոխվել են բարոյական, հոգևոր, նյութական արժեքները: Նա ընդգծել է սովորողների մեջ բարոյական բարձր արժեքները՝ ազգային ավանդույթները, քրիստոնեական հավատը, հայրենապաշտությունը, պետականության գաղափարը սերմանելու կարևորությունը:

ԼՂՀ կրթության և գիտության փոխնախարար Ս. Ասրյանը նշեց, որ կրթության ոլորտի առջև դրված կարևորագույն խնդիրներից մեկը՝ ռազմահայրենասիրական դաստիարակությունը, զինղեկներն են իրականացնում, ինչպես նաև նպաստում պատանիների՝ հետագայում բանակում բարեհաջող ծառայությանը: Նա ընդգծեց, որ ռազմագիտություն առարկան, որն ուսուցանում են զինղեկները, միշտ եղել է համակարգի պատասխանատուների ուշադրության կենտրոնում: Եվ եթե չլիներ նախապատերազմյան շրջանում առարկայի նկատմամբ բավարար պահանջկոտությունը, զինղեկների լավագույն աշխատանքը, երևի թե Արցախյան պատերազմի հենց սկզբի օրերին, երբ չկար կանոնավոր բանակ, սպասված արդյունքը չունենայինք:

Փոխնախարարի խոսքերով՝ ոչ մի առարկայի ուսուցչի նկատմամբ այնպիսի կոնկրետացված առաջադրանքներ, խնդիրներ չկան, ինչպես զինղեկների: Վերջերս կառավարության որոշմամբ հաստատվեց ուսումնական հաստատությունների սովորողների նախազորակոչային պատրաստությունը գնահատելու գիտական թերթ: Այնուհետև պատասխանեցին ուսուցչուհու հարցերին, կատարեցին նրա հանձնարարությունները՝ համակարգիչով կատարելով գործողություններ: Վերջում համակարգչի նվագակցությամբ նաև երգեցին:

Թեմայի ներկայացումն այնքան պատկերավոր էր, և երեխաներն այնպես աշխուժությամբ էին մասնակցում, որ դժվար թե որևէ մեկը չմտապահի այն: Մանավանդ որ վերջում կազմակերպիչները երեխաներին բաժանեցին ընտանեկան խոստում պարունակող թերթիկներ՝ յուրատեսակ պարտավորագրեր՝ ատամների խնամքի վերաբերյալ կետերով, որոնց տակ պետք է ստորագրեն երեխաները և ծնողները: Այսինքն՝ վերջիններս նույնպես մասնակից են դառնում գործընթացին:

Ծրագրի պատասխանատուները գոհ մնացին երեխաների համակարգչային գիտելիքներից: Երեխաների հետ նրանց շփումը՝ խաղալով, նկարելով, թեմատիկ զրույցներով՝ փորձելով ստուգել նրանց ունակություններն ու համակարգչին տիրապետելու աստիճանը, համոզեցին, որ դպրոցներում ուսուցիչների կողմից համապատասխան աշխատանք է կատարվում արգենտինահայ բարերար է. Էռնեկյանի հովանավորած ծրագիրը նպատակին ծառայեցնելու համար:



Հետագա անելիքների մասին խոսելով՝ ծրագրի անդամ Հ. Մկրտչյանն ասաց.

- Մենք շատ մեծ հույսեր ունենք, որ Ղարաբաղն ամբողջ տարածքով համացանցի մեջ կընդգրկվի, ու բոլոր երեխաները կունենան իրենց համակարգիչը, և փոքր տարիքից կսկսեն աշխատել նրանով, և կբացահայտվեն նրանց թաքնված կարողությունները: Յուրաքանչյուր երեխայի՝ մեկ համակարգիչ, որը գործիք է մտքի զարգացման համար, տրամադրելով՝ նպատակը դեպի մեծ աշխարհ պատուհան բացելն է: Ժամանակը չի սպասում: Եթե մենք ժամանակի հետ համաչափ չքայլենք, այն մեզ կտրորի ու կանցնի: Աչքերս կբացենք, կտեսնենք, որ շատ ենք հետ մնացել, այլևս շատ դժվար կլինի հասնել:

Ղարաբաղը փոքր բնական ռեսուրսներ ունենալով՝ նրա ուժը պետք է լինի մտավոր զարգացման մեջ: Ղարաբաղը խորհրդային ժամանակաշրջանում, ըստ տվյալների, այն տարածքն է, որտեղից հազար մարդու հաշվով ամենամեծ թվով գիտնականներն են դուրս եկել: Բայց ցավոք, Ադրբեջանի կազմում լինելով՝ նրանց ներդրումը Ղարաբաղ չի հասել: Հիմա հույս ունենք, որ կորցրած տարիները պետք է վերականգնենք: Ինձ այնտեղ հարցրին, թե Ղարաբաղում անգրագիտությունը քանի տոկոս է կազմում, որովհետև ինտերնետում Ղարաբաղի մասին քիչ տեղեկություններ կան, դրանք էլ հիմնականում վերաբերում են պատերազմին, տարածքային հարցերին: Դա մեր թերացումն է: Հիմա այս սերունդը ուրիշ կերպ պետք է աշխատի: Պետք է դուրս գալ աշխարհ՝ ոչ միայն աշխարհը ճանաչելու, այլև մեզ ներկայացնելու համար: Մենք չսովորեցինք մեզ ներկայացնել: Կարծես թե դրա մեջ բնական համեստություն կա, բայց ինչ-որ տեղ այն մեզ խանգարում է:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Արցախում հանրահայտ հապավում դարձած ՆՈՒՌ-ը՝ նոր ուսումնական ռազմավարությունը, որը հանրապետության կրթական համակարգում ներդրվեց արգենտինահայ բարերար էդուարդո Էռնեկյանի հովանավորությամբ՝ անցած ուստարում, թարմացված և ընդլայնված կներկայանա նոր ուսումնական տարում: Օգոստոսի 6-17-ը Արցախում էին ծրագրի արգենտինյան պատասխանատուները՝ ՆՈՒՌ ծրագրի մաս կազմող «Ֆրութֆուլ Արմենիա» հիմնադրամի ղեկավար Կոնստանսա Ռուլեն, ծրագրի ղեկավար Սեբաստիա Դյուվալը, անդամներ Լուսինե Յանիկյանը, Հասմիկ Մկրտչյանը:

Ինչպես գիտենք, ծրագրի նպատակն է հանրապետության դպրոցների 1-4-րդ դասարանների աշակերտներին տրամադրել մեկական համակարգիչ՝ նպատակ ունենալով նրանց ապահովել ուսուցման ժամանակակից մեթոդներով: Առաջին փուլում ընդգրկվեցին Ստեփանակերտի, Շուշիի և Քարին տակի դպրոցների շուրջ 3500 աշակերտներ: Այս տարի շուրջ 1000 առաջին դասարանցի կընդգրկվի: Ծրագրի անդամների այս այցի նպատակն էր Արցախում պատրաստել մասնագետներ: Այն բոլոր դպրոցներում, որոնք ունեն ինտերնետային կապ, և ուսուցիչները մասնակցել են ծրագրի դասընթացներին, ՆՈՒՌ-ը ունի ներկայացուցիչ՝ մեծ մասամբ ինֆորմատիկայի ուսուցիչներ, որոնք ավելի մասնագիտական պատրաստվածություն ունեն և պատասխանատու են ծրագրի ներդրմանը դպրոցներում:

Դասընթացների սկզբում՝ հինգ օր ծրագրի անդամները վերապատրաստման դասընթացներ անցկացրին հենց այդ ուսուցիչ-պատասխանատուների հետ: Նախ թարմացվեց նրանց իմացածը, այնուհետև նոր, ավելի բարդ աշխատանքներ կատարվեցին այդ նույն ծրագրերով, որ անցյալ տարի էին սովորել, ու նաև տեղեկացվեցին իրենց պարտականությունների մասին: Նրանցից էլ կազմվեց թիմ, որը կփոխարինի ՆՈՒՌ-ի անդամներին, երբ ծրագիրն Արցախում ավելի կտարածվի: Իսկ տարածումը կախված է ինտերնետային կապից, որի շնորհիվ նաև շրջանների դպրոցները կընդգրկվեն այդ ցանցի մեջ: Եվ որպեսզի ամեն անգամ Արգենտինայից մասնագետները չգան այստեղ, տեղում պատրաստված թիմը շրջաններում կաշխատի ուսուցիչների հետ և կապահովի ծրագրի ներդրումը դպրոցներում:

Հաջորդ շաբաթ դասընթացներ անցկացվեցին 5-րդ դասարանում դասավանդող տարբեր առարկաների ուսուցիչների համար: Նրանք պետք է աշխատեն չորրորդ դասարանն ավարտած՝ համակարգիչ ստացած երեխաների հետ, որոնք ամռանը պարապ չեն մնացել, «քչփորել» են համակարգչային ծրագրերը: Երեխաները համակարգչին երբեմն ավելի լավ են տիրապետում, քան մեծահասակները, և 5-րդ դասարանի ուսուցիչները պետք է գործ ունենան որակապես նոր երեխաների հետ, որոնք գիտեն համակարգչով աշխատել, ունեն բավականաչափ գիտելիքներ: Հասկանալի է, որ երեխաները կշարունակեն օգտագործել համակարգիչը, և նրանց դասավանդող ուսուցիչներն էլ պետք է կարողանան օգտվել դրանից: Պարտադիր չէ, որ 5-րդ դասարանի ուսուցիչն անցնի այն բոլոր ծրագրերը, ունենա այն պատրաստվածության մակարդակը, ինչ անցած տարի անցել են տարրական դասարանների ուսուցիչները: Բայց շատ կարևոր է, որ ուսուցիչն ինքն էլ իմանա, թե այդ համակարգիչն ինչ հնարավորություններ ունի, ինչ ծրագրեր, դրանցով ինչ աշխատանքներ կարելի է կատարել, կարողանա դասերի ընթացքում երեխաներին որոշ հանձնարարություններ տալ: Չնայած եթե ուսուցիչն ինքը ցանկություն ունենա, կարող է սովորել, բոլոր դպրոցներում կան համակարգիչներ, ինֆորմատիկայի ուսուցիչներն էլ հատուկ պատրաստված են ուսուցիչներին օգնելու համար:

Հետաքրքիր էր, թե ուսուցիչներն ավելի շատ ինչ հարցեր էին շոշափում

- Այս տարի նրանք այդքան շատ հարցեր չունեցան: Մտահոգությունը, որ մենք տեսանք անցած տարի, երբ առաջին անգամ մտանք լսարան, ու բոլորը կասկածանքով, մի տեսակ վախով էին նայում, մանավանդ տարիքն առած ուսուցիչները, որոնք մտածում էին, որ երբեք չպիտի կարողանան համակարգիչը յուրացնել, հիմա չկար: Դեռ այն ժամանակ 2-3 օր հետո զգացին, որ համակարգիչն այնքան էլ բարդ բան չէ. եթե ստեղնաշարը գիտես, կարծես ինքն է սովորեցնում իր հետ ինչպես վարվել:

Կապն արցախցի ուսուցիչների և Արգենտինայում ապրող մասնագետների հետ կլինի այսպես. եթե երեխան ինչ-որ խնդիր է ունենում, նա դիմում է իր ուսուցչուհուն. եթե վերջինս չի կարողանում լուծել, դիմում է տվյալ դպրոցի ներկայացուցչին, և եթե այնպիսի խնդիր է, որ ներկայացուցչի ուժերից էլ վեր է, դիմում է արցախցի համակարգողին, որն էլ կապվում է արգենտինյան մասնագետների հետ, ու ինչ որ պետք է, արվում է: Պարզ է, որ ՆՈՒՌ-ի անդամները չեն կարող անընդհատ կապի մեջ լինել հարյուրավոր ուսուցիչների հետ, բայց, ըստ էության, կապի մեջ են մշտապես: Նրանք տեղեկացրին, որ բացի կապի մեջ լինելուց, ստեղծել են կայքէջ, որտեղ ուսուցիչներին մշտական խորհուրդներ են տալիս, կայքէջում կա էջ ուսուցիչների և աշակերտների համար՝ բաժանված ըստ դասարանների և առարկաների: Նպատակն է, որ նրանք սովորեն այդ ռեսուրսից օգտվել, իմանան, որ ծրագրի անդամներն իրենց չեն սովորեցրել ու լքել: Նրանք այնտեղ՝ Արգենտինայում, ուսուցիչների համար աշխատում են: Հիմա նրանք ստեղծում են համացանցային գրադարան, որը կաշխատի՝ անգամ եթե դպրոցը ինտերնետային կապ չունենա: Դպրոցը կունենա իր սերվերը, կենտրոնը, իսկ գրադարանը կլինի դպրոցի սերվերի մեջ: Գրադարանի նյութերը հիմնված կլինեն ուսուցանվող առարկաների և դասագրքերի նյութերի վրա՝ ըստ ծրագրի: Այսպես, եթե երեխան անցնում է «Հովհաննես Թումանյան», դասագրքում կա հեղինակի երկու ստեղծագործությունը, ինքը սերվերում կարող է գտնել Թումանյանի կենսագրությունը, մյուս ստեղծագործությունները: Բացի այդ, կայքէջում կա Արգենտինայի հետ կապվելու կոճակը, որով ուսուցիչները կարող են իրենց սեփական դատողությունները, նկատառումները, առաջարկությունները, ինչու չէ՝ նաև քննադատությունը տեղադրել, մշակել այս կամ այն դասի վերաբերյալ իրենց մոտեցումը, խորհուրդ տալ և այլն:

Ուսուցիչներից բացի, երկու օր էլ ՆՈՒՌ-ի անդամներն աշխատեցին 2-5-րդ դասարաններ փոխադրված այն երեխաների հետ, ովքեր արդեն համակարգիչ ունեն: Թեման ատամների խնամքն էր: «Ընտրել ենք դպրոցից դուրս՝ ցույց տալու համար, որ այդ համակարգիչներով կարելի է կազմակերպել միջոցառումներ ամբողջ հասարակության համար: Երեխան կզգա պատասխանատվություն, կզգա, որ ինքն էլ դեր ունի հասարակության մեջ: Կստուգվեն երեխաների գիտելիքները ու նաև լավ սովորույթներ կարմատավորվեն նրանց մեջ»,- ասաց Լուսինե Յանիկյանը, որն էլ վարում էր միջոցառումը:

Երեխաներն սկզբում դիտեցին մուլտֆիլմ բերանի խոռոչի խնամքի վերաբերյալ: Այնուհետև պատասխանեցին ուսուցչուհու հարցերին, կատարեցին նրա հանձնարարությունները՝ համակարգիչով կատարելով գործողություններ: Վերջում համակարգչի նվագակցությամբ նաև երգեցին:

ՕԼԻՄՊԻԱԴԱ

ԱՆՄՈՌԱՑ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻՑ

Օլիմպիադաներն այն մրցասպարեզն են, որտեղ դրսևորվում են աշակերտների հմտությունները ու կարողությունները, ուր գիտելիքը դրվում է քննության, և հաղթում է նա, ով իր ձեռքում ամուր է բռնում իմացականության, գիտության գաղտնարանի բանալին:

Հուլիսի 22-28-ը Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ կազմակերպվեց համահայկական բնագիտական օլիմպիադա, որի նախապատրաստական աշխատանքներն իրականացրին օլիմպիական կազմկոմիտեն, հանձնաժողովների նախագահներն ու անդամները:

Համացանցի միջոցով մասնակիցներին երեք անգամ առաջադրվեցին խնդիրներ, անցկացվեց օլիմպիադայի համայնքային փուլը, որի արդյունքում հաղթողներն իրավունք վաստակեցին մասնակցելու օլիմպիադայի եզրափակիչ փուլին:

Համահայկական բնագիտական օլիմպիադայի եզրափակիչ փուլին իրենց մասնակցությունն էին բերել Ռուսաստանի Դաշնությունից՝ Մոսկվայի, Սանկտ-Պետերբուրգի, Կրասնոդարի, Իրանի Իսլամական Հանրապետությունից՝ Թեհրանի ազգային դպրոցների թիմերը, Ֆրանսիայի , Էստոնիայի Տարտուի ներկայացուցիչները, Զավախքի հայորդիները, Հայաստանի տարբեր մարզերի ներկայացուցիչներ և մեր՝ ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի աշակերտները:

Նախօրոք ստանալով կրթօջախի տնօրեն՝ վաստակաշատ մանկավարժ Սուսաննա Ներսեսյանի բարեմաղթանքն ու օրհնությունը՝ Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցի 5 մասնակից երեխաներն էլ հույս ու հավատով և մեծ ակնկալիքներով ու սպասումներով առլեցուն, ուղևորվեցին Հայաստան:

Մեզ շատ ջերմ ընդունեցին Երևանի ֆիզմաթ դպրոցում: Աշակերտները ստացան կրծքանշաններ, վերնաշապիկներ, նոթատետրեր ու գրիչներ:

Սենյակներում տեղավորվելուց հետո ընթրեցինք ու դուրս եկանք քաղաքում զբոսնելու: Ժամանած մասնակիցների հետ եղանք Կասկադում, իջանք մինչև Օպերայի հրապարակ, հիացանք Կարապի լճի գունագեղ լույսերով, ճերմակ ու ձյունաթույր կարապների տեսքով, Հյուսիսային պողոտայի նորակերտ երկնաքերների հաճույքն ըմբոշխնելով՝ մեր քայլերթը շարունակեցինք Հանրապետության հրպարակում, ուր վայելեցինք երգող շատրվանների գունային ու դասական երաժշտության համադրությամբ զուգակցվող գերերկրային բերկրանքն ու հաճելի ակնթարթները: Վերադարձին եղանք «Մայր Հայաստան» մոնումենտի և Հաղթանակի զբոսայգու տարածքում: Շատ ուշ էր, երբ վերադարձանք հանրակացարան՝ հոգնած, լիացած ու բավարարված մեր տեսած երեկոյան Երևանի հրաշակերտ տեսարաններով:

Հուլիսի 23-ին օլիմպիադայի բացման հանդիսավոր արարողությունն էր, որին իրենց մասնակցությունն ու օրհնությունն էին բերել ՀՀ ԿԳ նախարար Ա. Աշոտյանը, Սուրբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն տեր Վարդան քահանա Վարդան Նավասարդյանը, «Բնագետ» հանդեսի տնօրեն Կամո Աթայանը, գիտնականներ, կրթության ու գիտության երախտավորներ:

Միջոցառումը վարում էր Երևանի ֆիզմաթ դպրոցի շնորհաշատ ուսուցչուհի Գայանե Ներսիսյանը:

ՀՀ պետական հիմնի հնչյունների ներքո եռագույնը բարձրացրեց Երևանի ֆիզմաթ դպրոցի 12-րդ դասարանի սան, միջազգային օլիմպիադաների հնգակի մեդալակիր Արմեն Վարդանյանը, որին հաջորդեց ԿԳ նախարար Ա. Աշոտյանի ողջերթի խոսքը: Իր ողջույնի խոսքն ու բարեմաղթանքներն աշակերտներին հղեց նաև տեր Վարդան քահանա Նավասարդյանը:

Ոգևորված միջոցառմանը ներկայացած պետական այրերի ողջերթի հուսադրող բարեմաղթանքներով՝ երեխաները ջերմ ու սրտառուչ խոսքեր էին փոխանակում: Հնչեցին հայրենասիրական երգեր, «Կարին» ժողովրդական-ազգագրական համույթի կողմից կատարվեցին պարեր:

Դահլիճում հայ բարբառների շքահանդես էր, իսկ այդ ամենն ագուցողը հայի ոգին ու հայկական շունչն էր, մտածելակերպը, ու հայեցի դաստիարակությունը:

Բացման արարողությունից հետո երեխաներին տարան Ծիծեռնակաբերդ: Ասես լուռ ու անշշուկ երդման արարողություն կատարվեց, աշակերտները, վիշտն ու թախիծն աչքերում, ճերմակ մեխակներ դրեցին Մեծ եղեռնի զոհերի հիշատակն անմահացնող հուշահամալիրին: Թվում էր՝ նրանք վերապրեցին այդ սահմռկեցուցիչ ողբերգության ողջ ծանրությունը... Նրանց անեղծ ու զուլալ հայացքներում պայքարի ոգի կար, վրեժի ծարավ...

Վերադարձին ճանապարհին մեքենայով շրջայց կատարվեց քաղաքամայր Երևանի նորակերտ ճարտարապետական կառույցներով զարդարուն փողոցներով. տեսանք Վիլյամ Սարոյանի, Խաչատուր Աբովյանի, Պարույր Սևակի, Հովհաննես Թումանյանի և այլոց արձանները:

Ընթրելուց հետո տղաներն ու աղջիկները դպրոցի խաղահրապարակում վոլեյբոլ խաղացին, իսկ խմբի ղեկավարները, հեռվից դիտելով նրանց ընկերական խաղը, զրուցում էին ու մտքեր փոխանակում: Ստեղծվել էր մի ջերմ մթնոլորտ, ուր թագավորում էր ընկերասիրությունն ու հարգանքը միմյանց նկատմամբ. զգացվում էր Հայկ Նահապետի տոհմածառի դալար շիվերի ու նորաստեղծ ընձյուղների սաղարթների մեղմ սոսափյունը, քնքուշ շնչառությունն ու իրար սատար լինելու ձգտումը...

Հեքիաթային ու անկրկնելի օրերի շարքն ամուր հիմքերի վրա էր դրված՝ շնորհիվ Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի տնօրենության ջանքերի, կազմակերպչական մտահղացումների ու անթերի աշխատանքների:

Բնագիտական օլիմպիադան մեկնարկեց հուլիսի 24-ին: Մաթեմաթիկա առարկայից քննասեղանի առաջ էր արցախցի թիմի միակ աղջիկը՝ Արմինե Հայրապետյանը (11-րդ դասարան):

Բոլորը հուզված էին, անհանգիստ: Նրանք այնպես էին անհանգստանում իրար համար, որ թվում էր՝ օլիմպիադան թիմային էր, և երեխաները ոչ թե առաջին անգամ էին իրար տեսնում-ծանոթանում, այլ երկար տարիների հուշերն են նրանց միավորում:

Օրվա երկրորդ կեսին աշակերտներին տարան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Եղանք թանգարանում, թանգարանային նմուշների ու մասունքների մասին լսեցինք հստակ բացատրություններ: Այնտեղ կային մեր հավատի լուսե կանթեղները՝ 4-րդ դարի մասունքնշխարներ՝ մագաղաթներ ու մատյաններ, արքայական գահ-գավազան, թագ ու պսակ: 21-րդ դարի հայ ճարտարագիտական մտքի շունչն էր զգացվում վանքի շուրջ կառուցվող շինարարության որմերի ու քանդակների, խոյակների ու սյուների յուրաքանչյուր պատառիկի մեջ:

Հուլիսի 25-ին ֆիզիկայի օլիմպիադային մասնակցեցին Սամվել Միրզախանյանը (10-րդ դասարան) և Սերգեյ Հայրապետյանը (8-րդ «բ» դասարան): Այդ օրվա մեր մեկնակետը հեթանոսական Արեգ-Միհր Գառնի տաճարն էր: Մեր հպարտությունն անսահման էր, երջանկությունը՝ տիեզերական:

Հրաշակերտ, աստվածային դիրքով ու տեսքով Գեղարդավանքը՝ ժայռից բխող իր սառնորակ ջրերով ու անձեռակերտ բնությամբ, ավելի դյութեց, հմայեց ու զարմացրեց բոլորիս:

Ինֆորմատիկայից երեխաները՝ Սերգեյ Կուդրյաշովն ու Վալերի Բեգլարյանը (11-րդ «ա» դասարան), մրցեցին հուլիսի 26-ին, որին հաջորդեց այցելությունը Բյուրականի աստղադիտարան: Եղանք աշխարհահռչակ գիտնական, ֆիզիկոս, աստղագետ Վիկտոր Համբարձումյանի տուն-թանգարանում, հմայվեցինք նրա անթերի ձեռագրով, տեսանք նրա անձնական իրերը, ստացած պատվոգրերն ու մրցանակները, գրասեղանը և այլ անձնական իրեր: Իմացանք, որ նրա 4 զավակներից երկուսը նշանավոր ֆիզիկոսներ են, երկուսը՝ մաթեմատիկոսներ: Գիտեինք, որ արցախյան շարժման ակունքներում է եղել նա: Բարձրացանք աստղադիտարան, տեսանք աստղադիտակը, բայց քանի որ կեսօր էր, չթույլատրեցին նայել աստղադիտակով:



Հուլիսի 27-ին օլիմպիադայի փակումն էր ու մեր բաժանման տխրաթախիծ օրը: Փակման արարողությունը ևս շքեղ էր կազմակերպված: Դպրոցի տնօրեն Հ. Նավասարդյանը հավաստեց, որ օլիմպիադան կայացել է, քանի որ աշխարհի չորս ծագերից հանդիպել հայորդիները, մրցել ու հաղթել՝ դժվարություններ հաղթահարելու իրենց կամքով, գիտելիքներով ու կարողություններով:

Մրցանակային տեղեր նվաճած երեխաները ստացան իրենց դիպլոմներն ու մեդալները, իսկ մասնակից բոլոր աշակերտները՝ իրենց անունների առաջին տառերով հուշանվերներ, գրքեր, ամսագրեր:

Արցախյան թիմից Արմինե Հայրապետյանը մաթեմատիկա առարկայից արժանացել է 3-րդ կարգի դիպլոմի ու մեդալի, Սերգեյ Հայրապետյանը ֆիզիկայից՝ 3-րդ կարգի դիպլոմի ու մեդալի, Սամվել Միրզախանյանը ֆիզիկայից՝ 2-րդ կարգի դիպլոմի ու մեդալի, Սերգեյ Կուդրյաշովը ինֆորմատիկայից՝ 3-րդ կարգի դիպլոմի ու մեդալի, Վալերի Բեգլարյանը՝ հուշանվերների ու մրցանակային գրքերի:

Համահայկական բնագիտական օլիմպիադայից երեխաները վերադարձան տպավորված ու գոհ, քանի որ գնահատվել ու խրախուսվել էին հայ մտքի ու գիտության երախտավորների կողմից, ստեղծել նոր շրջապատ, անցկացրել հիանալի օրեր, որի համար մեր երախտագիտությունն ենք հայտնում ԿԳ նախարարությանը, Հ. Նավասարդյանին, Ս. Ներսեսյանին:

Շնորհիվ նրանց, մենք երկար, շատ երկար կհիշենք այդ երջանիկ օրերն ու պահերը, համահայկական բնագիտական առաջին օլիմպիադան:

Նուբար ՊՈՂՈՍՅԱՆ
ԵՊՀ-ին առընթեր
Ա. Շահինյանի անվան
ֆիզմաթ հատուկ դպրոցի
Ստեփանակերտի մասնաճյուղի
ՄԿԱԳ տնօրենի
տեղակալ

---

1 ☞ թյան կանոնադրությունը, որով հստակեցված են նախազորակոչային պատրաստությանն առնչվող գերատեսչությունների՝ առողջապահության, մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունների, ԿԱ փրկարար, ոստիկանության, Ազգային անվտանգության ծառայությունների՝ կառավարման լիազոր մարմնի՝ ԿԳ նախարարության և պաշտպանության նախարարության հետ համատեղ իրականացվող խնդիրները: Կանոնադրության մեջ նշված են նաև դպրոցի ղեկավարության և առավել ցայտուն՝ զինղեկների անելիքները: Նրանում նաև առաջադրված են զինղեկների աշխատանքի վերահսկողության պայմանները, ինչպես նաև տրվելիք գնահատականը կատարված աշխատանքին համապատասխան:

Ս. Ասրյանը տեղեկացրեց, որ նախնական զինվորական ծառայության ծրագրում տեղ են գտել փոփոխություններ, որոնց զինղեկները կարող են իրազեկվել դպրոցներին հատկացված տեղեկագրերից: Բոլոր դասարաններն ապահովված են համապատասխան դասագրքերով, ծրագրերով, դրանց գումարած՝ ՊԲ-ի հետ անցկացվող միջոցառումները հնարավորություն են տալիս բարձր արդյունավետության հասնել ռազմագիտությունից:

Եռօրյա հավաքների ընթացքում ՊԲ սպաների և ԿԳՆ մասնագետների կողմից համապատասխան թեմատիկայով զեկուցումներ ընթերցվեցին:

ԼՂՀ ԿԳ նախարարի հրամանով սովորողների նախազորակոչային պատրաստության և ռազմահայրենասիրական դաստիարակության ապահովման գործում լավագույն արդյունքներ ցուցաբերած զինղեկներն արժանացան պարգևատրման.

2010-2011--- ուսումնական տարում «Տարվա լավագույն զինղեկ» մրցույթում հաղթող ճանաչվելու համար՝ նախարարության պատվոգրով և հուշանվերով՝

- Ասկերանի շրջանի «Տարվա լավագույն զինղեկ»՝ Ասկերանի միջնակարգ դպրոցի զինղեկ Էրիկ Ապրեսյանը, Մարտակերտի շրջանի «Տարվա լավագույն զինղեկ»՝ Նոր Այգեստանի միջնակարգ դպրոցի զինղեկ Գոռ Ավանեսյանը, Շուշիի շրջանի «Տարվա լավագույն զինղեկ»՝ Քարին Տակի միջնակարգ դպրոցի զինղեկ Բաղդասար Բաղդասարյանը.

- Լավագույն դասամիջոցառում կազմակերպելու համար՝ Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցի զինղեկ Վլադիմիր Գևորգյանը, Մարտունու շրջանի Աշանի միջնակարգ դպրոցի զինղեկ Արմեն Ղարամյանը, Թաղավարդի միջնակարգ դպրոցի զինղեկ Զավեն Բաղասյանը, Մարտակերտի հ. 2 միջնակարգ դպրոցի զինղեկ Գրիգոր Սարգսյանը.

- ռազմամարզական միջոցառումների առաջնություններում պարբերաբար լավագույն արդյունքներ ցուցաբերելու համար՝ Մարտունու արհեստագործական ուսումնարանի զինղեկ Արտակ Սարգսյանը.

- «Ասպետ» ռազմամարզական ճամբարի կազմակերպման գործընթացում բարձր մակարդակ ապահովելու համար՝ Ստեփանակերտի հ. 5 միջնակարգ դպրոցի զինղեկ Արսեն Հարությունյանը, հ. 10 հիմնական դպրոցի զինղեկ Վարուժան Աղաջանյանը:

ՊՆ ռազմահայրենասիրական դաստիարակության և հասարակական կազմակերպությունների հետ կապերի բաժնի պետ, զինղեկների հավաքների ստուգարքային հանձնաժողովի նախագահ, գնդապետ Շահեն Այդինյանի կարծիքով, նման հավաքները դրական տեղաշարժ են ապահովում ինչպես զինղեկների աշխատանքում, այնպես էլ նորակոչիկների ծառայությունում: «Մեր հաղթանակի ամենամեծ գրավականներից մեկն այն էր, որ նախնական զինվորական պատրաստությունը միշտ եղել է բարձր մակարդակի վրա»,- ասաց նա:

Հավաքի մասնակիցներին ԿԳ նախարարության և ՊԲ հրամանատարության կողմից բարեմաղթանքի խոսքեր և հաջողություններ մաղթեցին նոր ուսումնական տարվա կապակցությամբ:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Ուրախալի է, որ կրթական գործը հանրապետությունում վերջապես սահուն հունի մեջ է մտել:

«Տեսչության յուրաքանչյուր աշխատող քաջ գիտակցում է, թե ինչ է անում և ինչի համար է անում: Մեզ հաջողվել է բոլորին համախմբել մեկ գաղափարի շուրջ. այն է՝ անմնացորդ նվիրվել ուսուցման ու դաստիարակության պատվաբեր գործին, անել ամեն հնարավորը՝ ազնիվ անուն ձեռք բերելու, մանկավարժների սիրուն ու հարգանքին արժանանալու համար»,- կարդում ենք ԼՂՀ ԿԳՆ կրթության պետական տեսչության պետ Սոս Արզումանյանի «ԼՂՀ ԿԳՆ կրթության պետական տեսչության 2011-2012 ուստարվա ընթացքում կատարած աշխատանքների մասին» («Լուսարար», թիվ 21-23, 2012թ.) հաշվետվության մեջ: Ես այն կարծիքին եմ, որ սրանում պետք է տեսնել բոլոր ձեռքբերումների գրավականը: Արդարև, ազնիվ գաղափարի շուրջ համախմբվելն ամեն ինչ է, ու ճիշտ է այն միտքը, թե մենակ ձեռքը ծափ չի տա:

Հաշվետվությունից ակներև է դառնում, թե ինչ հսկայական աշխատանք է կատարվել ոլորտում: Ուզում եմ իմ մի քանի նկատառումները ներկայացնել:

Տարիների իմ փորձից եկել եմ այն համոզման, որ դպրոցի և՛ «տերը», և՛ «ծառան» ուսուցիչն է: Ուսուցիչը կարող է դպրոցի անունը երկինք հասցնել, պարզ է՝ լավ աշխատանքով, գիտակից վերաբերմունքով և դարձյալ «նորին մեծություն» ուսուցիչն է, որ կարող է խաչ դնել հարազատ կրթօջախի երբեմնի բարի համբավի ու պատվի վրա իր ճղճիմ մտածողությամբ, իր անկարողությամբ, ասել կուզի՝ ամեն ինչ կախված է ուսուցչից: Տեսուչն անուժ է ուսուցչին փոխել, եթե վերջինս ինքը սիստեմատիկ աշխատանք չի տանում առարկայի մեջ խորանալու, մանկավարժական վարպետությունը խորացնելու ուղղությամբ: Խելոք ուսուցչի համար ամենալավ դեղն ու դարմանը ինքնակրթությունն է. փորձից ելնելով եմ այսպես ասում: Խորհուրդ կտայի տեսչապետին, բոլոր տեսուչներին՝ ստուգումների ժամանակ հույժ կարևոր ուշադրություն դարձնել այս խնդրին, հետաքրքրվել, հարցնել, իմանալ, թե վերջերս ով ինչ գիրք է կարդացել, ինչ թեմա է մշակել, լրացուցիչ ինչ աղբյուր է գտել և այլն: Մի խոսքով, անհրաժեշտ է շարժել, ուշքի բերել «քնածներին», գրի ու գրքի հետ կապերը մասամբ կամ իսպառ խզածներին: Ու ամենակարևորը՝ մեկ անգամ հարցնելով չբավարարվել, հետևողական լինել, նորից հարցնել, նորից հիշեցնել, պահանջել: Միայն այս ձևով կարելի է «մոռացկոտ» ուսուցչին գրքին մոտեցնել, թե չէ... միջակներից շատերը (նույնիսկ լավերից ոմանք) շարունակելու են խռով մնալ անգամ դպրոցի աղքատիկ գրադարանից, քայլել տրորված նույն ճանապարհով կամ էլ, ինչպես պատահում է, մեկ-մեկ պատսպարվել, գլուխ պահել շրջանային ու հանրապետական օլիմպիադաներում առաջնություն գրաված իրենց սաների պարգևների քողի տակ: Համաձայնեք, այսպես էլ է լինում. ուսուցիչը պարծենում, հպարտանում է տեղ գրաված՝ պատվի ու փառքի արժանացած իր աշակերտով ու մի տեսակ բավարարվում ունեցածով: Թող պարծենան, և արժե, որ պարծենան, բայց իմանան, որ ամենագիտունն էլ կարիք ունի ու պարտավոր է ամեն օր մեկ-երկու էջ կարդալ՝ իմացածին մի բան ավելացնելու, տեղում չդոփելու համար:

«Ներդպրոցական վերահսկողությունն ինքնանպատակ կլիներ առանց տնօրենության կողմից անցկացվող պլանային սիստեմատիկ դասալսումների»,- կարդում ենք տեսչապետի հաշվետվության մեջ:

Ես, որ ավելի քան 40 տարի ուսումնական մասի գծով փոխտնօրեն եմ եղել, առարկություն չընդունող տոնով ուզում եմ բարձրաձայն հայտարարել. այնտեղ, որտեղ տնօրենի ու տեղակալների կողմից նպատակային դասալսումներ նախօրոք պլանավորված, գրաֆիկով սահմանված բաց դասեր չեն կազմակերպվում, ոչինչ չի արվում կամ չնչին բան է արվում կոլեկտիվի յուրաքանչյուր անդամի ընդունակությունները բացահայտելու, լավերին ըստ արժանվույն խրախուսելու, համեմատաբար ետ մնացողներին առաջ քաշելու, կրթական համակարգի հոգսն ու փարոսը բոլորին տեսանելի, սրտամոտ դարձնելու համար: Շատ կուզենայի, որ ընթերցողն ինձ ճիշտ հասկանար: Այն երանելի տարիներին ես դասեր եմ լսել ոչ թե ինչ-որ պլան (պլա՞նս որն է) կատարելու, այլ ուսուցիչներին ստեղծագործ աշխատանքի մղելու, նրանց սրտանց օգնելու, ոգևորելու, առաջավոր փորձը, նորը, ուսանելին տարածելու նպատակով: Բոլորի մոտ՝ անխտիր: Իսկ թե ինչպես, ինչ ձևով՝ այլ խնդիր է: Ասեմ միայն, որ ես դաս եմ լսել գրեթե ամեն օր (երբեմն՝ 3-4 ժամ), գրառումներ կատարել խնամքով, ամենայն բարեխղճությամբ, դիտողություն, առաջարկություն արել տակտով, մտածված, առանց դիմացինի ինքնասիրությունը վիրավորելու ու... առանց հաշիվը պահելու:

Ու հիմա զարմանում եմ, որ առանձին տնօրեններ, փոխտնօրեններ խիստ հաշվարկ են անում և անցնող ամեն շաբաթվա վերջում մատների վրա հաշվում, թե քանի ժամ մնաց պլանը կատարելու, հաղթական կեցվածք ընդունելու, իրեն ապահովագրելու, օձիքն ազատելու համար: Եկեք ինքներս մեզ թույլ չտանք, որ անզեն աչքով նկատվող այս տհաճ երևույթը նոր սահմաններ ընդգրկի:

Դաս լսելը պետք է հաճույք լինի, ոչ թե պարտադրանք, հաճույք՝ և՛ լսողի, և՛ վարողի համար: Հակառակ դեպքում քանակը ստեպստեպ հաշվելն անխուսափելի կդառնա: Ասում ու զարմանքս չեմ թաքցնում, որ մի շարք դպրոցների ղեկավարներ ժամանակ չեն գտել կամ ուղղակի զլացել են և դաս լսելու պլանը կատարել են 15, 20, 30 տոկոսով: Հետաքրքիր է՝ ինչո՞վ էին զբաղված: Ինչքան գիտեմ, նրանք դպրոցի դուռը բացում են նաև դաս լսելու համար: Ու քանի այս տարրական բանը չեն հասկացել, կառաջարկեի նրանց վարձատրել աշխատավարձի 15, 20, 30 տոկոսի չափով: Գոնե մեկ-երկու ամիս:

Լավ, ասենք մարդը մոռացել ու դաս չի լսել, իր անմիջական պարտականությունը չի կատարել, իսկ որտե՞ղ են եղել կրթության շրջանային բաժինները: Այդ ինչպե՞ս է այդքան երկար տարիներ աննկատ մնացել: «Ներքին ստուգում չիրականացնելն աններելի փաստ է»,- նշված է զեկուցագրում: Համամիտ եմ, բայց փաստն արձանագրելը դեռ ամեն ինչ չէ, հարկավոր է ավելի լուրջ հետևություններ անել:

«Տեսչության պետը և մի քանի տեսուչներ եղել են Արցախի հանրային հեռուստատեսության «Մեր դպրոցը» հաղորդաշարի հյուրերը ու արծարծել նոր դասագրքերի հետ կապված խնդիրներ»,- շարունակում ենք կարդալ: Սա նույնպես ցանկալի երևույթ է: Էլ ի՞նչ տեսուչ, որ գոնե տարին մեկ անգամ իր խոհերը, մտորումները չարտահայտի հեռուստատեսությամբ, ռադիոյով կամ էլ մամուլում, էլ ի՞նչ տեսուչ, որ դպրոցում լինելուց մի ուշագրավ զեկուցում չկարդա, մանկավարժների հետ մտքեր չփոխանակի, այս կամ այն հրատապ թեմայի շուրջ խոսք չբացի, մարդավարի չզրուցի, իր կիրթ ու հարգալից վերաբերմունքով մեծի ու փոքրի սիրտը չնվաճի: Տեսուչը հո աշխարհ չի՞ եկել միայն ստուգելու, ազդու հայացքով լռեցնելու կամ կաշվե իր նոր թղթապանակով, պլպլան փողկապով, շահած-պահած «սերմացու» բառերով զարմանք ու պատկառանք ստեղծելու համար:

Մի բան էլ՝ ու վերջ: Ողջունելի է նաև, որ ստուգումների արդյունքը՝ որպես կանոն, քննարկվում-ամփոփվում է կրթական համակարգի պատասխանատուների մասնակցությամբ: Այո, պետք է հնարավորինս թափանցիկ դարձնել (հատուկ ընդգծենք, որ «Լուսարարը» բարձր գնահատականի արժանի գործ է կատարում այս ուղղությամբ) տեսչության ամեն մի քայլ, պետք է լայն հասարակության սեփականությունը դարձնել ամեն մի որոշում, հրաման, ծրագիր, հրահանգ ու, որ առանձնապես կարևոր է, այդ ամենի կենսագործմանը ներգրավել բոլորին, ոլորտի ղեկավարներին, աճող սերնդի միտքը հղկողներին, ծնողներին, թոշակի անցած մանկավարժներին: Սա նույնպես ինչ-որ չափով կնպաստի ուսման ու դաստիարակության որակի բարձրացմանը, բոլոր օղակների սերտացմանը, համակարգի գործունեության ըստ ամենայնի աշխուժացմանը:

Միքայել ԲԱԼՅԱՆ
Թոշակառու մանկավարժ

ՇԱԽՄԱՏԸ ՄՏՆՈՒՄ Է ԴՊՐՈՑ

Երևի նկատել եք, թե շախմատ խաղալ չիմացողներն ինչպիսի տհաճությամբ ու ձանձրույթով են նայում շախմատի տախտակի վրա կքած շախմատիստներին, որոնք ժամերով կենտրոնացած՝՝ շարժում են խաղաքարերը: Նրանք չգիտեն, որ շախմատիստի միտքը շն-չավորում է դրանք, և շախմատի տախտակի վրա հրաշքներ են կատարվում: Շախմատիստը հազար-հազարավոր շախմատասերների հետ ինքն էլ դառնում է հանդիսատես: Նա չգիտի, թե ինչպիսին կլինի վախճանը. հուզվում է, ցնծում, տարակուսում, հիանում:

Շախմատը դարեր շարունակ գրավում է մարդկանց, մեծ բերկրանք պատճառում նրանց: Հետաքրքիր է, ո՞րն է նրա ուժը: Ի՞նչ է շախմատը... Շախմատիստների մի հսկա բանակ, հատկապես վաղ շրջանի (XVII-XIXդդ.), այն համարում էր արվեստ: Եվ դա անվիճելի է:

XIXդ. վերջերից առաջ եկավ շախմատային թեորիան, որի հիմնադիրն աշխարհի առաջին չեմպիոն Վիլհելմ Ստեյնիցն է: Գործածության մեջ դրվեց շախմատի ժամացույցը: Բարձրացավ շախմատային պարտիայի դինամիկան: Շախմատին սկսեցին վերաբերվել նաև որպես սպորտի և գիտության: Հենց այդպես էլ բնութագրել է աշխարհի իններորդ չեմպիոն Տիգրան Պետրոսյանը. «Շախմատը խաղ է, որի մեջ մտնում են սպորտը, արվեստը և գիտությունը»: Ըստ Պետրոսյանի՝ շախմատի գրավչության մյուս մեծ սյունը «անսխալ խաղալու անհասանելի ձգտումն է»:

Շախմատը երեխաների մտավոր զարգացման և դաստիարակման մեծ ուժ ունի: Բերենք հանրաճանաչ մի քանի շախմատիստների կարծիքն այդ մասին. «Շախմատը հոգով թույլ մարդկանց համար չէ» (Վ. Ստեյնից), «Շախմատի տախտակի վրա սուտն ու երեսպաշտությունը տեղ չունեն» (Էմ. Լասկեր), «Ես համոզված եմ, որ շախմատում, չնայած այն խաղ է, պատահական ոչինչ չկա» (Տ. Պետրոսյան):

Լրագրողի այն հարցին, թե ամենից առաջ իմաստուն այս խաղն ինչ հատկանիշ է մշակում մարդու մեջ, Պետրոսյանը պատասխանել է՝ կենտրոնացման կարողություն:

Մի՞թե հենց այդ կենտրոնացումը չի պակասում մեր աշակերտներին, որոնք ուղղակի սարսափում են երկու-երեք գործողությամբ հասարակ խնդիրներից կամ որևէ տեքստի սյուժեն վերարտադրելուց:

Այժմ մի քանի մտորումներ ընտրովի և զանգվածային պարապունքների մասին:

Իհարկե, շատ հաճելի է ընտրյալ երեխաների հետ պարապելը: Նրանք աճում են օրեցօր: Պարապմունքի ժամերն անցնում են հագեցած: Հատկապես հետաքրքիր է անցնում ուսուցման, այսպես կոչված, առաջին մասը, երբ երեխաները երկուսից-չորս ամսվա աշխատանքից հետո լրացնում են երրորդ կարգ: Գոհ են թե՛ երեխաները և թե՛ ծնողները:

Որոշեցի նույնն անել իմ դասարանում: Քսանյոթ աշակերտներից 30-40%-ը ցույց տվեց որոշակի արդյունք, իսկ մնացածների համար եղավ դատարկ ժամ: Ծանր էր այդպիսի պայմաններում աշխատելը, և երկար չշարունակվեց:

Պատճառները.

- Չէր խրախուսվում դպրոցի ղեկավարության կողմից:

- Ընտանիքներում որոշակի վերաբերմունք չկար շախմատի հանդեպ (միայն չորս-հինգ ընտանիքում շախմատ կար):

- Շախմատի ժամերը պարտադիր չէին:

Խոսքն այն մասին չէ, որ շախմատը մասսայականացնելուց պետք է հրաժարվել: Հակառակը, վերը նշված բացասական գործոնները վերանալուց հետո հաջողությունները ակնհայտ կլինեն:

Մեր նպատակը գրոսմայստերներ աճեցնելը չէ: (Չենք հրաժարվի նաև այդ մտքից): Առաջին հերթին շախմատը պետք է նպաստի աշակերտների բարոյահոգեբանական դաստիարակության և մնացած առարկաների դյուրին յուրացման գործին:

Մի դեպք հիշեցի իմ պրակտիկայից: Նկատեցի, որ բռնցքամարտի մարզիչը համոզում է իմ առաջատար աշակերտներից մեկին տեղափոխվել իր խմբակը: Ես ասացի, որ նա շախմատիստ է: «Հենց ինձ էլ շախմատիստ է պետք»,- պատասխանեց նա: Մեկնաբանությունները թողնենք աշխարհի 1963-69թթ. չեմպիոն Տ. Պետրոսյանին «Ձեզանից ոչ բոլորը կդառնան շախմատիստ, բայց ոչ ոք չի ափսոսա այն ժամանակը, որը տվել է շախմատին, քանի որ այն կօգնի ձեզ ցանկացած մասնագիտության մեջ»:

Եվս մի մեթոդական նրբություն: Շատերին թվում է, թե երեխաներին շախմատային թեորիայի կանոններն անգիր անելը բավական է, որպեսզի կոչվի ուժեղ շախմատիստ: Կամ՝ ինչո՞ւ են այդքան հեշտամարս թվացող օրենքները դժվար ընդունվում որոշների կողմից: Պարզվում է, որ լավ շախմատիստ դառնալու համար կան ավելի գլխավոր գործոններ:

Աշխարհի վեցերորդ չեմպիոն Միխայիլ Բոտվիննիկը, դասավորելով այն չորս հատկանիշները, որ անհրաժեշտ է լավ շախմատիստ լինելու համար. տեսական պատրաստությունը դրել է երրորդ կետում, առաջին կետը հատկացրել բնական տաղանդին:

Զուր չէ իմանալ երկրորդ և չորրորդ կետերին տրված պահանջները՝ ուժեղ, կազմավորված բնավորություն և աշխատունակ համակարգ: Բոտվիննիկի այս խորհուրդը, կարծում եմ, կօգնի ձեզ ավելի նրբանկատ մոտեցում ցուցաբերել երեխաների նկատմամբ:

Եվ վերջապես, դպրոցի մեծ նպատակներից մեկը աշակերտներին ինքնուրույն մտածել սովորեցնել է, նյութը վերլուծության և քննության ենթարկելը:

Շախմատի յուրացումը կօգնի ձեզ այդ գործում:

Մարատ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Քաշաթաղի շրջան,
Գողթանիկի դպրոցի
ուսուցիչ

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ

_ԹՈՂԵՑԻՆՔ ՁԵԶ ՄԵՆԱԿ, ՏԽՈՒՐ ՀԱՅԱՑՔՈՎ ԱՌ ԱՍՏՎԱԾ

Վերջին փշրանքները մեր էրգրի…

Ո՞վ կմտածեր, ո՞վ կմտածեր, թե կյանքիս առաջնային նպատակ դարձրած էրգիրը տեսնելու երազանքը բարի մարդկանց շնորհիվ կդառնար իրականություն, շատ ցանկալի, բայց և խիստ, լուռ ու անողոքաբար ցավեցնող դաժան իրականություն: Եվ ո՞վ է լսել կամ թե տեսել, թե մարդու համար տառապանքի ու ցավի ճանապարհը լինի ցանկալի երազանք…, և դա մերն է, մեր երազանքը, օջախ ու բույն կորցրած, էրգիր կորցրած հայիս երազանքը…

2012թ. հուլիսի 28-ին Ստեփանակերտ մայր քաղաքի Սբ. Հակոբ եկեղեցում մոմեր վառելով, աղոթք մրմնջալով, շուրջ երեսուն հոգանոց մեծ խմբով ճանապարհ ելանք, երկար ու շատ սպասված, գոց ու փակ բազում դռներով ճանապարհ, մեզնից մարմնապես չկտրված, բայց և մեզնից շա՜տ հեռու Արևմտյան Հայաստան տանող ճանապարհը… Գեղեցիկ մի երկիր, սոսկալի, ցավեցնող իրականության մեջ թաղված: Եվ գիտեինք, և չգիտեինք, որ հայրենիք կերտած մշեցու, վանեցու, իգդիրցու ու կարինցու լացող, վերջացող ու մեռնող վերջին փշրանքներն ենք տեսնելու…

Գյումրիից ոչ շատ հեռու Կարս բերդաքաղաքը, մեծն բանաստեղծի, մեծահարուստ ու քանքարավոր հայերի, քարակոփ ու արարող Հայոց ձեռքերի վկայությունն ու դրոշմն առայսօր իր շնչառության մեջ կրող Կարսը, Կարսը, որ Գյումրիից այնտեղ ֆայտոնով ու կառքերով էին անցնում մեր պապերը, խաշ ու խորոված ուտում և հետ գալիս, մեզ՝ նրան հասնելու համար հարկավոր էր անցնել շրջանցիկ երկար ճանապարհ, հատելով Վրաստանի սահմանը, մեր ալեկոծ ապրումների մի մասն էլ բաժին հանելով հայաշունչ կյանքի զարկերակն այլևս կորցնող, հայերեն հազիվ շնչող Ջավախք աշխարհին, Մեծ Հայրենիքի բեկորված մարմնի ցավն ու ափսոսանքը մեր սրտում, հառաչանքի ու թախծի ահագնացող ապրումներով, վրաց Թամար թագուհու, Ախալցխեի անառիկ բերդերով, Փարվանա և Կուր գետերի խառնարանով տպավորված՝ ճանապարհը մեզ բերեց նորից հասցրեց Շիրակ, այն հատվածը, որ այսօր արդեն Հայաստան չէ քարտեզի վրա, այլ թուրք-վրացական սահման… Ապշահար, կարոտով ու զարմացած, նաև զայրացած հիանում էինք (հետաքրքիր հոգեվիճակ է, չէ՞. զայրացած հիացմունք)՝ միաձուլված ամեն մի քարուքփով, կուսականության աստիճան մաքուր ալպիական կանաչներով, սարահարթերով, լանջ ու դաշտով, որոնց նոր տերերը կարծես գետնի տակ էին անցել, իսկ տերը մենք էինք, դա երկիրն էր մեր՝ մնացած անտեր…

Գեղեցիկ էր Երկիրը մեր, նույն օդը, նույն ջուրը, նույնն էր և Արևի համն ու հոտը, բայց ի լուր և ի տես ողջ աշխարհի, նոր՝ թուրքական զգեստներ հագած, որտեղ փոքրիկ մի բարձունք կամ տեսանելի թեք լանջ՝ թուրքական դրոշն է ծածանվում և Աթաթուրքի դիմապատկերը, ինչքան ավելի մեծ բարձունք ու բերդ՝ այնքան ավելի մեծ ձևաչափով էին կանգնած դրոշն ու թուրքերի հայրը: Ինչպիսի՜ շինծու, բայց հետևողական պետական քարոզչություն, ազերի գովազդերի բոլոր ձևերով ու չափերով անգամ հայոց սրբատուն եկեղեցիների, կառույցների վրա… Ո՞րն է պատմության դատի ճշմարտությունը, կամ իրենք չե՞ն ամաչում ուրիշինը յուրացնելով, կամ էլ մենք չե՞նք հասկանում, որ նման ձևով են դառնում ուժ և պետություն: Մեքենաներն ասես սահում էին: Թվում էր՝ մեզ պես մտամոլոր ու մտազբաղ, սպասումով, թե երբ կնշմարվի Կարսի բերդի բարձունքը…

Ահա և Կարսը, հուլիսի 29-ի մեր գյուտն ու սպասումը՝ սրտամաշ ու սպանիչ իր այսօրվա հագուստներով՝ հատուկենտ մարդիկ փողոցներում, կանայք՝ ոտից գլուխ ծածկված ընդունված մահմեդական կարգահագուստով և միայն աչքերը բաց: Անցնում էինք փողոցից փողոց, հայացքներս հառած շենք ու պատերին, փնտրում էինք մերը, մեր Կարսը, հայկական Կարսը… Միայն ցավն ու ափսոսանքի զգացումն էր համակել մեր սրտերը, երբ մեր առաջ իրենց վեհությամբ կանգնեցին սրբատաշ ու ամրակուռ քարերով, ժանյակավոր պատշգամբներով փողոցներն ու տները հայերի՝ կողպեքները կախված դարպասներին, անտեր ու աղերսող, բնության գութին և քաղաքականության ձեռքին պահ տրված… Իսկ Կարսի փողոցներում իր Կարինե Քոթանջյանին կորցրած մեծն պոետի տան պատերի վերջին հիմնաքարերն էին երերում: Թերևս օրը նոր էր թեքվում մայրամուտին, բայց ի զարմանս մեզ՝ հատուկենտ այդ մարդիկ էին անցնում փողոցներով, թվում էր՝ չի շնչում քաղաքը, թվում էր՝ բոլորը թաքնված են իրենց տներում, իսկ գուցե և նրանք զբաղված էին իրենց ամենաերկար՝ երկիրը, պետությունը հզոր պահող հավատքին անվերապահ ու խոնարհ իրենց ծառայությունը մատուցելով. չէ՞ որ մզկիթներից հնչող հոգևոր կանչը իր բարձր, ազդու և ճնշող ձայնով խոնարհ լռության էր մատնել քաղաքին:

Մայրամուտի Կարսը խիստ մահմեդական մի քաղաք էր՝ ճնշող ու ներևույթ լռության ու ամայության ներքո… Որ հայ քարաշեն վարպետներն ուրույն ու տիպիկ արվեստ են կերտել, այդ մասին մեզ իր վեհությամբ վկայեց առանց Խաչի, տխուր ու լուռ, բաց և հպարտ ու վեհորեն կանգնած Կարսի հայկական եկեղեցին, հզոր կառույց-Աստծո տաճար, որ ասես հայ մնալու պայքարից հոգնած, այլևս հանդուրժում էր այլոց՝ մահմեդականների մուտքն ու հավատքի ծեսերը իր կամարների տակ…

Քաղաքի Կարս

Մշո Սբ.Կարապետ Առաքելոց վանք

Ինչպիսի՜ ապրումներ և կյանքի՝ մեզ մատուցած ինչպիսի՜ փիլիսոփայություն. եկեղեցու ներսում մենք՝ հայերս և նրանք՝ մահմեդականներն առ Աստված մրմնջում էինք միասին՝ նրանք իրենցը՝ ծնկած, երեսով փռված գորգերին, մենք՝ մերը…

Ներիր մեզ, Սուրբ Նշան, ներիր, որ դուրս գալով, քեզ մեն-մենակ թողեցինք, նորից թողեցինք քեզ անօրենին: Իսկ անառիկ Կարսի բերդից աշխարհին նայող Աթաթուրքը հատուկ, գիտակցաբար է բարձրացել այնտեղ, որ ամեն անգամ Կարս մտնող հայերին հիշեցնի այն տխրահռչակ պայմանագրի մասին, որով մենք զրկվեցինք մեր պապենական հողերից և այս բերդի պարիսպների տակ քանի՜-քանի դարեր ու քանի՜ անգամ արյուն հեղած ռուս և հայ գեներալներին ու զինվոր տղաներին ասես մա՜տ է թափ տալիս: Բայց չհուսահատվեցինք դառն իրականությունից, ո՛վ գիտի, պատմության ու դիվանագիտության խաղի կանոնները. գուցե մի օր էլ կշրջվեն հօգուտ մեզ… որ Թուրքիայի սիրտը Արևմտյան Հայաստանում չէր բաբախում, որ նա փորձում է ընդամենը ավիշներով, այլ ոչ երակներով պահել մեր հողը՝ դա մենք տեսանք, և դա փաստ էր. խոտհարքի դաշտերում ու արոտավայրերում անգամ լռություն էր, աչքից լքված լռություն: Այդ պետության զարկերակն ու շունչն այնտեղ է, Եվրոպայի դռների մոտ:

Ներիր մեզ, Կարս, մեր հայկական Արևի ու Հողի, մեր մշակույթի, քաղաքակրթության ու հոգեբանության բերդ, ներիր, որ ընդամենը մի օր մնացինք քո գրկում, այն էլ «Ղարաբաղ» անունը կրող հյուրանոցում, մնաս բարյավ, Կարս, գնում ենք դեպի Քույր, ցավերով լի Անի… Պակասեցի՞ն, արդյոք, ցավերը քո, Կարս, թե մեր գալով նորից աղ լցրինք քո բաց վերքերին…

Հուլիսի 30, 2012թ.

Բարև, Անի: Հայրենաշեն Բագրատունյաց գահանիստ քաղաք, դու մեր՝ ավերված Հայոց ամբողջական սրտի մարմնացում: Որտե՞ղ ես, երբեմնի հազար ու մի եկեղեցիների, շահաստանի, վաճառականների և առևտրի մայրուղիների քաղաք, մեր Անի, Ախուրյանի աջ ափին թառած, հոշոտված ու բռնաբարված, հայացքդ՝ մեզ, հույսդ՝ ծով արած Անի…

Կարսից Անի տանող քառասուներեք կիլոմետր ճանապարհն այնպես հեշտ սահեց, անցավ և, հավատացեք, կար, այո՛, կար այն հզոր զգացումը, որ մենք մեր հողի վրա ենք, մենք էինք տիրական հայացքով նայում մեր շուրջը, նրանց, թերևս, ավա՜ղ, տիրական էին ընդամենը մեր ապրումներն ու քայլքը…

Անիի Ավագ դռան հայատառ ու հայակառույց՝ Անիի անձնագիրը հիշեցնող գավիթին վեր էր խոյանում այն, որ կիսալուսին ունի վրան՝ դրոշը, դրոշը թուրքական… Ինչպիսի՜ լկտիություն: Չէ՜, նա միայն մեզ վրա չի ուզում ծիծաղել, այլ աշխարհի, աշխարհի վրա էլ է հանդգնում ծիծաղել: Այստեղ էլ, ինչպես ամեն քայլափոխի, մենք երիցս ու կրկին հասկացանք, որ չէ, ինչքան էլ համաշխարհային բարձր ատյաններ ու կլոր սեղաններ՝ սուտ են, ուժն է լուծում աշխարհի հարցերը, և պետք է կարողանալ ճիշտ տեղն ու դիրքը նվաճել ազգերի շքերթի մեջ: Մենք անզոր էինք այդ սահմռկեցուցիչ ամայության մեջ գոնե բարձրաձայն աղաղակել, խենթի նման ի լուր աշխարհի բղավել ու ասել. այս ի՜նչ ենք անում, մի՞թե կարելի է այդքան մեծ ու անամոթ գող լինել… դեռ չգիտեինք, որ առջևում ավելի ծանր գողություններ էինք հանդիպելու…

Գրում և ակամայից հիշում եմ 2005թ. Հին Ջուղայի խաչքարերի սպանդը մեր քթի տակ, մեր աչքի առջև ու վախենում եմ, վախենում եմ մտածել, որ արդարության դատի մեր՝ հայոց կառքը չգիտեմ որտեղ կանգնել է, կանգնել ու տեղից չի շարժվում, ո՞ր մացառներում, ո՞ր սարի ետևում է կանգնել Հայոց արդար դատի կառքը, թե՞ կառապանն է մեռել, որ չի հասնում մեզ… Չէ՛, ոչ մեկը և ոչ մյուսը, չէ՞ որ աշխարհն այսօր մարդկությանը մատուցում է նաև անսպասելի փոթորիկներ, ժայռեր են փլվում, և այդ փլված ժայռերի ստորոտներում մանուշակ, ծիլ ու ծաղիկ ազատորեն փթթում են…

…Մեկիկ-մեկիկ համբուրելով Անիի տաճարների ու սրբատների քարերը, մոմեր վառեցինք Կաթողիկե Մայր տաճարում՝արժանավոր ու բարեպաշտ հայոց թագուհու՝ Կատրամիդեի անուշաբույր մատնատեղերը գգվելով, և թեև ուղեկցողների կազմից անընդհատ զգուշավորություն էր հորդորվում, բայց և այնպես, բժշկուհի Լյուդմիլա Գրիգորյանի հոգեթով, լալահառաչ ու բարձրաձայն՝ առ Տեր Հիսուս Քրիստոս շարականը փոթորկեց բոլորիս սրտերը… Արցունքները, հայոց արցունքներն առատորեն թափվում էին տաճարի սրբատաշ քարերին, իսկ տաճարում մեր աղոթքին ներկա գտնվող տեղացի մահմեդականների վրա մենք, ըստ երևույթին, թողեցինք գիժ խենթերի տպավորություն: Ես ուրախ եմ, որ նրանք մեզ գժերի տեղ դրեցին, ոչինչ, թող այդպես մտածեն, գժության մեջ էլ ուժ ու զորություն կա, հաճախ գժից էլ են վախենում… Մայր Անիի այդ մեկ օրվա ծանր ցավերի զամբյուղից մենք բաժին վերցրինք մեզ հետ, գոնե այդ օրը միայն երևի քիչ թեթևացնելով փրփրաբաշ Ախուրյանի՝ Մայր Արաքսին տանող վշտի ու ցավի բեռը… Քիչ հեռվում, ձայն տալու և առնելու լսելի հեռավորության վրա, գետի ձախ ափին Հայաստանի Հանրապետության սահմանն էր, մեր հպարտությունը, մեր անունազգանունի հարատևման ծանր բանալին, սահմանի մեր կողմում կողքկողքի փողփողում էին Ռուսաստանի Դաշնության և ՀՀ պետական դրոշները… Բարկ արևի տակ այս ու այն կողմ գրեթե վազելով, հողն ու պատերը համբուրելով, հրաժեշտ տվեցինք հարսնաշորը հազար տեղից պատռված ու բռնաբարված, սիրտը բեկորված, այրի դարձած Անիին, լռության մեջ գել ու ոհմակին թողած… Անին լուռ էր, բայց ո՞վ գիտե, ինչքան սաստում ու կշտամբանք՝ այդ քար լռությանը մատնված ավերակներում…

Ավագ դռնից վերջին անգամ հետ նայեցինք ու ամոթով շրջվեցինք՝ չկարողանալով պատասխանել նրա հարցապնդումին. «Մինչև ե՞րբ է օտարի դրոշը ծածանվելու իմ

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ

սրբատան պատերին»: Դժվար էր, բարև չառած, ասում ենք առայժմ, ցտեսություն, Անի, ցավերիդ պարկերից մեր շալակն առած գնում ենք դեպի Իգդիր, Բայազետ, Վանա Ծովակ ու Սարի Խաչ… Գրքերից ու դասագրքերից մեր ականջին իրոք հեռվից է հնչում Իգդիրը՝ մեծ զորավար Դրոյի ծննդավայրը, մինչդեռ իրար ետևում թողնելով մեր պատմական հայրենիքի գեղեցիկ բնաշխարհի հատվածները, լսեցինք ուղեկցողի շատ սակավ հնչող բառերը. Իգդիրն է… Եվ ինչ… Իգդիրն այդքան մոտ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզին, շատ մոտ Արաքսի այդ հատվածի այն ափին, այնքան մոտ, որ բջջային հեռախոսներով առանց որևէ դժվարության կապ հաստատվեց Հայաստանի Հանրապետության, անգամ Արցախի հետ, երկար ճանապարհ անցնելով, թվում էր, հեռանում ենք, մինչդեռ… հենց այդ վայրերում այդ հողի համար, ամեն մի կամրջի, բարձունքի համար են զարկել ու զարկվել ֆիդայապետ տղաները մեր, զարկել ու, ցավոք, զարկվել ապարդյուն… Իգդիրն էլ, Բայազետն էլ կորցրել էին հայկական դեմքը և ներկայանում էին որպես տիպիկ ասիական, գավառային, ոչ այնքան բարեկարգ, կենտրոնից հեռու ու ձգված բնակավայրեր՝ կենցաղավարության իրենց խնդիրներով… Ճանապարհին հանդիպում էին փոքր գյուղեր և թիթեղածածկ, և հողաշեն կտուրներով… Չմոռանամ նորից շեշտել այդ պետության հավատքի հզորության մասին, վեր խոյացող մեչիդների մասին, ասես ոչ թե մարդիկ, այլ հենց դրանք են խոսում, թելադրում, կարգադրում: Բայազետի բարձրադիր մի տեղից պարզորոշ ու ծանրադիր իր վեհությամբ հեռվում հառնեց Արարատը… Հայոց Աստվածային Լեռը մեզ հետևում էր իր փառահեղ նստավայրից, և ինչ մտածեցի այդ պահին. Աստված մեր հոր՝ Արարատ Լեռան լանջերին հայրենիք պարգևեց մեզ, բայց ինչո՞ւ մոռացավ արարչի իր ձեռքով մի մեծ գավազան տալ նրա Ձեռքը, որ Լեռս այդ բարձունքից իր հզոր գավազանով ամենքին իր տեղը ցույց տար և հայրենիքի դարպասներն ամուր պահեր: Իմաստուն լեռս թերևս առանց գավազան, բայց երկիրը եզերող ու պահող, շուրջպար հիշեցնող իր դուստրերին պարգևեց մեզ, մեր լեռները. տվեց ու ասաց. ապավինե՛ք լեռներին, պինդ պահեք, բազմացեք ու մեծ Ածու դարձեք, որ հզորանաք ու շատանաք, և Ազգս դառնա և ինձ, և իրեն պահող մեծ գավազանը…

Ցտեսություն, Բայազետ և փորձիր հասկանալ մեզ, որ ասեմ, ախր դու էլ, քրդական ու մահմեդական այդ բնակավայրերն էլ. ի՞նչ եք տալիս այսօրվա աշխարհի քաղաքակրթությանը, բա էդ արդար եղա՞վ, որ բնիկներին, գիր, գրականություն, մշակույթ ստեղծած իմաստուններին քշեցիք և, թող Տեր Աստվածը ների ինձ… այլ և այլ հոտերով (խոսքս մաշկի հոտի մասին է) խառնակեցիք այդ ազնվական աշխարհը, փողոցներում անգամ ծանր էր օդը, իսկ դռներից ներս՝ անտանելի: Մեքենաները սլանում էին տապից շնչահեղձ, բայց որակյալ ասֆալտե ճանապարհներով, և կար այն զգացումը, թե կյանք չկա այդ կողմերում, մեր կողմերում, դեպի մեզ կողմերում, և ինչքա՜ն դեպի մեզ՝ այնքա՜ն ծանր լռություն… Զարմանալու բան, իրավամբ զարմանալու: Մինչև Վանա ծովակին հասնելը անցանք հարյուրավոր կիլոմետրեր, բայց ամբողջ այդ երկար ճանապարհին անգամ, թեկուզ մի մ[illegible]նա, մի հարցնող մարդ չպատ[illegible]ց մեզ… Ահա և Բերկրիի ջրվեժը, իջևանեցինք և այստեղ էլ հանդիպեցինք թուրքահայախոս ու անվանափոխ, գուցե քրդախոս հայերի, ուրախացան, թաքուն մեր ականջին շշնջացին, որ հոգի կտան հայի համար և որ իրենց տանը հայկական դրոշն են պահում: Ցավալի էր. նրանք հայերեն ոչ մի բառ չգիտեին, իսկ գեղեցիկ աչքերով տղաները կրում էին մահմեդական անուններ: Իրիկնադեմին անզուգական Վանա լիճը մեր առջև բացվեց անկրկնելի գեղեցկությամբ, իսկ քաղաք Վան տանող ճանապարհը ձգվում էր լճի երկայնքով, որը մեզ հնարավորություն տվեց երկար ու ձիգ ժամանակով վայելելու լճի գեղեցկությունը, խոսելու և արտասվելու նրա հետ:

Ահա և երեկոյան Վանը առատ լույսերի ու պլպլացող գովազդների մեջ թաղված: Վանը մեզ ներկայացավ որպես մեծ ու ստվար բնակչություն ունեցող մի քաղաք, որպես այդ պետության՝ մեզ հանդիպած արևելյան մեծ զարկերակ, որտեղ ասես միաձուլվում էին արմատական ասիական ու եվրոպական



Միերի դուռ

տարրերը, դա գուցեղ փայլերով քաղաք էր: Վանում մեր ուղևորության սկիզբը եղավ Միերի դուռ այցելելը. զարմանահրաշ ժայռափոր Մեծ դուռ՝ վերից-վար սեպագիր արձանագրությամբ, կողքին՝ տներ, այգիներ, որ հին Վանն էին հիշեցնում: Միերի դուռ հուշարձան-կոթողը անկրկնելի ու մեծարժեք մի հնություն էր, դյուցազնավեպում հիշատակվածը՝ իրականություն՝ բացված մեր աչքի առաջ: Ինչպե՞ս, ինչպե՞ս հասկանալ, որ ընդամենը մի քանի տասնյակ տարում հայերի բնօրրանը կարող էր այդքան կերպարանափոխվել ու պատկերափոխվել, և հայության մասին հիշեցնողն ընդամենը փշրանքներ էին, վերջացող քամուն ու ավազին հանձնված փշրանքներ… Առջևում պատկառազդու, հազարամյակների պատմություն ունեցող Վանա (Տուշպա) բերդն էր. ընդգրկուն ծավալով ու պարագծով, անառիկ բերդը, որի հիմնաքարերը դրել են ուրարտական Սարդուրի I թագավորի օրոք: Այդքան հզոր, վառախոսուն պատմական վկայություն դժվար թե մի ուրիշ տեղ հանդիպեր: Բերդի բարձունքն ու Արգիշտիի դամբարանը բարձրանալը մագլցելու ուժ էր տվել բոլորիս: Եվ ինչպիսի՜ զարմանահրաշ կառույցներ, դամբարան ու սեպագրեր՝ արծվանիստ ու մարդու համար գրեթե անանցանելի ժայռերին փորված… Դե արի ու մի՛ զայրացիր. թուրքն ո՜ւր, սեպագրերն ուր, բերդ-ամրոցի բարձունքին, որպես այդ ամենի տեր ու տիրակալ, դիմաստվում էր թուրքական դրոշը, ո[illegible]վրա երևի մի օր էլ կգրեն «Ես եմ [illegible]իրականը» բառերը… Մեր Վանա սառնորակ աղբյուրից ջուր խմեցինք, վերջին հրաժեշտը տվեցինք այն տեղերին, ծառերին ու այգիներին, որտեղ ժամանակին հայ մեծանունների կողմից երգ ու տաղ են ծնվել, որտեղ տղաներն են գիշերով հավաքվել և պաշտպանության պլաններ մշակել, որտեղ հայկական զենքի շաչյունն ու հողվորի հորոմարդիկ ինչքա՜ն փոքր ու տկարն ենք Վասպուրական տան իմաստունների կողքին… Միայն դատել է պետք, ի՜նչ հզորություն ունեին նրանք և ինչպիսի՜ հեռագնա իմաստնություն, որ Վանա լճի ամենից մեծ կղզին ընտրեցին հայոց հավերժության տուն կառուցելու համար…

Աղոթք Անիի ավերակներում

ձևավորված ու հարմարեցված հանգստատեղի, որտեղ զով երեկոներին այլազգիներն էին հանգիստ ըմբոշխնում. ո՞վ գիտե քանի՜ հայերեն բանաստեղծություն ու տաղ են ծնվել սառնորակ այդ աղբյուրի մոտ, որից չհագեցած՝ հեռացանք, մեր բարձրաձայն հնչեցրած երգն ու խոսքը խառնեցինք նրա քչքչոցին ու հեռացանք… Ո՞վ էինք մենք Վանում… Վանի տերե՞րը, թե՞ ինքնակոչ հյուր… ուղևորության հանգրվանները շատացնում, բազմապատկում էին մեր ցավերը, նաև՝ խորապես սնուցում ու բարձրացնում մեր՝ հայիս ազգային հպարտությունը. այս ի՜նչ հրաշքներ է կերտել հայը, ինչպե՜ս է ջանել ու տոկացել, պահել երկիրը իր, անգամ աչքի համար դժվար հասանելի ու տեսանելի լեռների ծերպերին ամրոց ու բերդ կառուցել, պաշտպանվել ինքնություն ու հավերժվող անուն պահել… Չէ, ուժեղ, ուժեղ ենք մենք մեր ազգային ոգով և հայրենասիրությամբ, մենք հազվագյուտ ժողովուրդ ենք բոլորի մեջ, և կգա օրը, երբ մեծ եղբայր ու մեր հարևանը լիովին գիտակցի, որ նախ և առաջ հանուն իրեն պետք է ամուր բռնի մեր ձեռքը… Երկու ձեռքերի ամուր դաշինքը կբերի այդ օրը…

…Աղթամար և Սուրբ Խաչ…

Սուրբ Խաչ… եզակի գեղեցկության ու ուրույն ճարտարապետության կոթող՝ նշենիների պուրակի մեջ… Այստեղ էլ թուրքը Եվրոպային հաճոյանալու համար մեծ դժվարությամբ հանդուրժեց խաչի տեղադրումը եկեղեցու վրա, բայց խորամանկ ու հայատյաց քաղաքականությունը և պետական մակարդակով փոքրոգությունը ու գուցե հետևանքներից ու վախից ծնվող զգուշավորությունը սքողել չի կարողանում՝ ուխտավորներին չթույլատրելով Սբ. Խաչում մոմ վառել…

Մեր արտահայտված ըմբոստացմանը՝ ինչո՞ւ չի կարելի, մի՞թե դա աստվածահաճո է, չէ՞ որ դուք էլ ձեզ հավատավոր եք համարում, համազգեստով «կարգը» պահող ոստիկանը պատասխանեց. «Մեզ այդպես է ասված, գնացեք դուրս, դրսում է ձեր այդ գործողության տեղը»:

Խոնարհում ու մեծարանք հազար տարիների բոլոր սերունդների խոնարհումն ու երախտագիտությունը ձեզ, Վասպուրական տան մեծատուններ, Սուրբ Խաչն արարողներ, Գագիկ ու Մանուել, քարը տաշած, ողկույզն ու արծիվը, առյուծն ու հավերժության քանդակները Սուրբ Խաչի պատերին թողած, հող ու ոսկոր դարձած Հայոց Ձեռքեր, այս ի՜նչ հրաշք եք դուք թողել դարերին, համբուրում եմ ձեզ, ձեր ոտնահետքերն ու ամուր ու անսասան պատեր դարձած ձեր ձեռքերը, զգացմունքներն ու բառերը սուտ են ու փոշի՝ ձեր անունն ու արածը հիշատակելու համար…

Օ՜, Տեր Աստված, ահյի Աստված, պիտի գա օրը …

Հայացքով վերջին անգամ գուրգուրեցինք քեզ, երգեցինք, որ հայիդ կարոտն առնես, և հրաժեշտ տվեցինք, թողեցինք քեզ տխո՜ւր, մենա՜կ նշենիների պուրակում: Բայց չտխրես ու պինդ կաց, մեր Սուրբ Խաչ, արևելքից, արևմուտքից և աշխարհի բոլոր ծայրերից համայն հայության հզոր շունչն է քեզ հետ, քո սյուների ու կամուրջների տակ, այն քո շունչն է, քո շնչառությունը, քո Խաչի զորությունը նորեն քեզ պսակ դարձած…

Վանա լճի արևմտյան ափով ճանապարհը տանում էր դեպի Մշո դաշտ ու Մուշ, դեպի այսօրվա Մուշ քաղաքի հայկական թաղամաս, մեծ, բայց ավերված, ավազի փոշու կույտեր դարձող հայկական Մուշ… Մի քանի հարյուր մետր այն կողմ, հայոց տներին դեմ-հանդիման գերեզմանատունն է, իսկ տներին գրեթե կպած, գետակից այն կողմ, բլրի լանջին բանջարանոց ու հասուն պտուղներով ծիրանենիներ ու մի անշուք, անհիշատակ գերեզմանաքար… այստեղ է հանգչում ֆիդայական աստղաբույլի ամենից երևելի ու քաջ լեգենդը՝ Գևորգ Չաուշը, Սուլուխի մարտում զարկված Չաուշը, Զորավարի հմայքն ու հպարտությունը, ում ընկնելու, զոհվելու բոթը դարձավ նրա կյանքի ամենից տխուր օրը: Քայլում էինք հին հայկական Մուշի փողոցներով, ասես այստեղ էինք, Արցախի պապենական, Մուշի նման ծերացող ու քանդվող գյուղերից մեկում, այստեղ՝ Արցախում, Ջավախքում, թե այնտեղ՝ Էրգրում, ծերացող ու քանդվող շեներն ու գյուղերն ասում են մի բան՝ շատ ենք կորցրել ու դեռ էլի կորցնում ենք՝ հեռանալով մեր արմատներից, ձուլվելով աշխարհի կենտրոնական զարկերակներին ու հետո էլ անդիմագիծ ու անանուն՝ ուրիշ անուն…

Իսկ ի՞նչ ասեմ, ի՞նչ գրեմ Մշո Սուրբ Կարապետ վանքի մասին, որի դուռը գնալն ու մեր տեսածը շատ հեռու էր և՛ մարդկայինից, և՛ քաղաքակրթության նշույլներից: Վանքս՝ քանդված ու ավերակ մի քանի կիսականգուն պատերով, ավանակներին ու ոչխարի հոտին շուք արած. դա դեռ անմեղ կենդանիների անմեղ վերաբերմունքը վանքին, իսկ ի՞նչ անուն տաս այն ոչ մարդկային արարքներին, որ վանքին կիպկպած տներում ապրող մի քանի տասնյակի, գուցե և հարյուրների հասնող երեխաների համար այն ծառայում էր որպես…. և ամեն օր ու ժամ ալլահ կանչող կանայք տեսնում և հանդուրժում են այդ ամենը: Վանքի շուրջը փռված

☞16

Կարսի բերդ

ՏԵՍՉԱԿԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

«2» օգոստոսի 2012թ. N 139/Մ ք. Ստեփանակերտ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՄԱՍԻՆ ՏՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՆՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ԼՂՀ կրթության և գիտության նախարարի 2012թ. ապրիլի 23-ի N 62-Ն հրամանով հաստատված հավելվածիN 3-ի 3-րդ կետի 6-րդ ենթակետը՝ հրամայում եմ՝

1. Հաստատել հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի վարպետության մակարդակի մասին տեղեկանքը՝ համաձայն հավելվածի:
2. ԼՂՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ընդհանուր բաժնին՝ սույն հրամանը ներկայացնել ԼՂՀ շրջանների վարչակազմերի աշխատակազմերի կրթության բաժնի վարիչներին և հրապարակել «Լուսարար» թերթում:

ՆԱԽԱՐԱՐ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԼՂՀ կրթության և գիտության նախարարի
2012 թվականի օգոստոսի 2-ի N 139/Մ հրամանի

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՄԱՍԻՆ

1. Ուսուցչի ազգանունը, անունը, հայրանունը----------
2. Ծննդյան թիվը, վայրը----------
3. Տեղեկություններ ուսման վերաբերյալ (ինչ ուսումնական հաստատություն է ավարտել, մասնագիտությունը)----------
4. Դպրոցը, վայրը----------
5. Դասավանդած առարկան----------
6. Ատեստացիոն հանձնաժողովի կողմից տրված ատեստացիոն թերթի ամսաթիվը----------
7. Ինչպես է տիրապետում դասավանդած առարկային (ըստ դասալսման հարցաթերթի? Չև 1)----------
8. Հրատարակված դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, հրապարակված հոդվածներ (նշել)----------
9. Ինքնագնահատականն ըստ հարցաթերթի (Չև 2)----------
10. Գործընկերոջ գնահատականն ըստ հարցաթերթի (Չև 3)----------
11. Սովորողի գնահատականն ըստ հարցաթերթի (Չև 4) ----------
12. Ծնողի գնահատականն ըստ հարցաթերթի (Չև 5)----------

Դպրոցի տնօրեն _____ _____
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

Կ.Տ .

Չև 1
ԼՂՀ կրթության և գիտության նախարարի 2012թ.օգոստոսի 2-ի N139/Մ հրամանով հաստատված հավելվածի

Դ Ա Ս Ա Լ Ս Մ Ա Ն Չ Ե Վ Ա Թ ՈՒ Ղ Թ ....

Դպրոցի անվանումը ըստ իրականացվող կրթական ծրագրի աստիճանի և հիմնական ծրագրերի տեսակների	
Դասալսող մասնագետի ազգանունը, անունը, հայրանունը	
Դասալսման օրը, ամիսը, տարին	
Դասարանը, դասաժամը	
Սովորողների թիվը դասամատյանով	
Ներկա սովորողների թիվը	
Դասալսման տևողությունը (րոպե)	
Դասավանդող ուսուցչի ազգանունը, անունը, հայրանունը	
Առարկան	

Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ր Ի Չ Ն Ե Ր	Գերազ. 3	Լավ 2	Բավ. 1	Անբավ. 0
Դասի հիմնական նպատակներն ու խնդիրները ձևակերպված են				
Դասի փուլերը տրամաբանորեն շաղկապված են, դասաժամը հագեցած է				
Դասի ընթացքում օգտագործվում են արդյունավետ մեթոդներ, հնարներ և միջոցներ				
Դասի ընթացքում օգտագործվում են դիդակտիկ նյութեր				
Սովորողները (այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողները) ներգրավված են ուսուցման մեջ				
Սովորողների ձեռք բերած գիտելիքները խորն են և բազմակողմանի				
Առաջադրանքները տրվում են հստակ, դրանց ստուգումը հետևողական է				
Նոր նյութի ուսումնասիրումը հիմնավոր է և հետաքրքրաշարժ				
Նոր հասկացություններն ու եզրույթները պարզաբանվում են հիմնավոր, մատչելի				
Ստեղծվում են ներառարկայական և միջառարկայական կապեր				
Խթանվում են սովորողների ինքնուրույն հետազոտական կարողությունների զարգացումը և ճանաչողական հետաքրքրությունները				
Դասարանում ստեղծվում է բարենպաստ սոցիալ-հոգեբանական մթնոլորտ, կարևորվում է արժեքային համակարգի ճիշտ ձևավորումը				
Դասարանը կառավարում է հմտորեն, բարձր կուլտուրայով, մանկավարժական տակտով, իր անձնական օրինակով ուղղորդում է սովորողներին				
Խթանում է սովորողների սոցիալական հմտությունների զարգացումը				
Ապահովում է հետադարձ կապ				
Օգտագործում է գնահատման զանազան ձևեր, գնահատականները հիմնավորվում են				
Դասաժամն օգտագործում է արդյունավետ և նպատակային				
Դասի պլանը համապատասխանում է ներկայացված պահանջներին				
Դասի նպատակի իրատեսությունը, իրականացման աստիճանը				
Կարողանում է հմտորեն ձևափոխել նախապես պլանավորած դասը				
Տնային հանձնարարությունը տալիս է հստակ, բացատրում է հիմնական պահանջները				
Դասի ընթացքում կիրառում է տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ				
Դասագրքից դուրս օգտվում են այլ գրականությունից, նյութերից (նաև՝ էլեկտրոնային)				

63-69 միավոր-գերազանց, 50-62 միավոր-շատ լավ, 30-49 միավոր-լավ, 17-29 միավոր-բավարար, մինչև 17 միավոր-անբավարար

Ընդհանուր գնահատականը՝		

Դասալսող մասնագետի ստորագրությունը _____

Դասավանդող ուսուցչի ստորագրությունը _____

ՏԵՍՉԱԿԱՆ

Ձև 2

ԼՂՀ կրթության և գիտության նախարարի 2012թ.օգոստոսի 2-ի N139/Մ հրամանով հաստատված հավելվածի

Ուսուցչի ինքնագնահատման հարցաթերթ				
Դասավանդող ուսուցչի ազգանունը, անունը, հայրանունը				
Առարկան ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ	Գերազ. 3	Շատ լավ 2	Լավ 1	Բավ. 0
Ես հաճույքով հաշվի եմ առնում գործընկերներիս խորհուրդները				
Ես մշտապես թարմացնում եմ իմ գիտելիքները				
Ես լավ եմ տիրապետում իմ առարկային				
Գործընկերներս հաճույքով են հաշվի առնում իմ խորհուրդները				
Ես պատրաստակամությամբ օգնում եմ նրանց, ովքեր դրա կարիքն ունեն				
Ես հաճախ եմ հանդես գալիս հետաքրքիր նախաձեռնություններով				
Ես տիրապետում եմ մանկավարժական նոր մեթոդներին				
Ես հանգամանորեն նախապատրաստում, պլանավորում եմ իմ աշխատանքը				
Ես հաշվի եմ առնում սովորողների անհատական առանձնահատկությունները				
Ես վայելում եմ սովորողների և ծնողների հարգանքը				
Իմ սովորողների ծնողները կրթության և դաստիարակության հարցերով հաճախ են դիմում ինձ				
Իմ սովորողները ցանկացած հարցով անկաշկանդ կարող են դիմել ինձ				
33-36 միավոր-գերազանց, 30-32 միավոր-լավ, 17-29 միավոր-բավարար, մինչև 16 միավոր-անբավարար				
Ընդհանուր գնահատականը՝				

Աշակերտի հարցաթերթ				
Դասավանդող ուսուցչի ազգանունը, անունը, հայրանունը				
Առարկան ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ	Գերազ. 3	Լավ 2	Բավ 1	Անբավ. 0
Նա այնքան պարզ ու մատչելի է բացատրում նոր դասը, որ ես ամեն ինչ հասկանում եմ	0	0	0	0
Նա ուշադիր և բարի է բոլոր աշակերտների նկատմամբ	0	0	0	0
Մենք հարգում ենք նրան	0	0	0	0
Նրա դասերին աշխատում ենք չուշանալ և չբացակայել	0	0	0	0
Աշակերտներին գնահատելիս նա արդար է և օբյեկտիվ	0	0	0	0
Նա չի վիրավորում մեզ	0	0	0	0
Նրա դասերը հետաքրքիր են	0	0	0	0
Մենք հեշտությամբ մեր անձնական խնդիրները քննարկում ենք նրա հետ	0	0	0	0
Եթե նա լրացուցիչ հանձնարարություն է տալիս, ապա ես հաճույքով եմ կատարում դրանք	0	0	0	0
Աշակերտները խուսափում են նրա հետ քննարկել անձնական հարցեր	0	0	0	0
Նա կարողանում է դասարանը ղեկավարել և սովորողները ուշադիր են	0	0	0	0
Ես նրա տնային հանձնարարությունները կատարում եմ առանց կողմնակի օգնության	0	0	0	0
Ես անհամբեր սպասում եմ նրա դասին	0	0	0	0
Նրա դասն այնքան հետաքրքիր է անցնում, որ չեմ զգում ժամանակը	0	0	0	0
Ես կցանկանայի, որ մյուս տարի էլ մեզ դասավանդեր	0	0	0	0
42-45 միավոր-գերազանց, 30-41 միավոր-լավ, 16-29 միավոր-բավարար, մինչև 15 միավոր-անբավարար				
Ընդհանուր գնահատականը՝	0	անբավարար		

Ձև 3

ԼՂՀ կրթության և գիտության նախարարի 2012թ.օգոստոսի 2-ի N139/Մ հրամանով հաստատված հավելվածի

Գործընկերոջ հարցաթերթ				
Դասավանդող ուսուցչի ազգանունը, անունը, հայրանունը				
Առարկան ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ	Գերազ. 3	Շատ լավ 2	Լավ 1	Բավ. 0
Նա մեր դպրոցի ամենալավ ուսուցիչներից մեկն է				
Եթե ես որևէ մեկի խորհրդի կարիքն զգամ, հաճույքով կդիմեմ նրան				
Նրա գնահատականները օբյեկտիվ են				
Նա մշտապես թարմացնում է իր գիտելիքները				
Ես նրանից սովորելու շատ բան ունեմ				
Նա լավ է կարողանում կառավարել դասարանը				
Նա լավ գիտի իր առարկան				
Նա պատրաստակամությամբ օգնում է բոլորին, ովքեր դրա կարիքը զգում են				
Նա սիրում է շփվել ուսուցիչների հետ				
Նա չի բացակայում դասերից				
Երբ դպրոցում դասերից դուրս որևէ աշխատանք է հարկավոր անել, նա սովորաբար փորձում է խուսափել				
Նա հաճախ է հանդես գալիս հետաքրքիր նախաձեռնություններով				
Նա շատ օգտակար է մեր դպրոցին				
Նա տիրապետում է մանկավարժական նոր մեթոդներին				
Նա վայելում է ծնողների և աշակերտների հարգանքը				
Նա հաճույքով է ընդառաջում օգնության խնդրանքով դիմողներին				
Նրա հետ զրուցելը հաճելի է				
Բոլորը պետք է օրինակ վերցնեն նրանից				
46-54 միավոր-գերազանց, 34-45 միավոր-շատ լավ, 24-33 միավոր-լավ, 18-23 միավոր-բավարար, մինչև 18 միավոր-անբավարար				
Ընդհանուր գնահատականը՝				

Ծնողի հարցաթերթ				
Դասավանդող ուսուցչի ազգանունը, անունը, հայրանունը				
Առարկան ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ	Գերազ. 3	Լավ 2	Բավ 1	Անբավ. 0
Նա արդար և օբյեկտիվ է աշակերտներին գնահատելիս	0	0	0	0
Նա ուշադիր և բարի է աշակերտների նկատմամբ	0	0	0	0
Երեխաս հաճույքով է հաճախում դասերին	0	0	0	0
Ես հաճախ եմ նրանից խորհուրդ հարցնում երեխայիս դաստիարակության վերաբերյալ	0	0	0	0
Երեխաս հեշտությամբ է կատարում նրա հանձնարարած տնային աշխատանքները	0	0	0	0
Երեխաս հարգանքով է խոսում նրա մասին	0	0	0	0
Նա մեր դպրոցի ամենալավ ուսուցիչներից մեկն է	0	0	0	0
Նա լավ գիտի իր առարկան	0	0	0	0
Նա ծնողներին հեշտությամբ ներգրավում է դպրոցի աշխատանքներում	0	0	0	0
Երեխաս աշխատում է նրա դասերը բաց չթողնել	0	0	0	0
Ես հարգում եմ նրան	0	0	0	0
Նրա հետ զրուցելը հաճելի է	0	0	0	0
Ես վստահ եմ, որ նրա առարկայից երեխաս խորը և կայուն գիտելիքներ է ստանում	0	0	0	0
Երեխաները շատ են սիրում նրան	0	0	0	0
Նա չի բացակայում դասերից	0	0	0	0
Իմ երեխայի կրթության հարցում պատրաստ եմ օգնել նրան	0	0	0	0
44-48 միավոր-գերազանց, 32-44 միավոր-լավ, 16-31 միավոր-բավարար, մինչև 15 միավոր-անբավարար				
Ընդհանուր գնահատականը՝	0	անբավարար		

ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

2012-2013 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՀՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընթացիկ գնահատման համակարգը բաղկացած է երկու հիմնական ձևերից՝

միավորային գնահատում և ուսուցանող գնահատում:

Միավորային գնահատում

Ուսումնական առարկայից կախված՝ միավորային գնահատումն

իրականացվում է հետևյալ հիմնական տեսակներով.

- բանավոր հարցում,
- գործնական աշխատանք,
- թեմատիկ աշխատանք,
- կիսամյակային ամփոփիչ աշխատանք,

ինչպես նաև «կարճ ժամանակի համար նախատեսվող» հարցարանը (թեստը)՝որպես թեմատիկ աշխատանք և «տնային աշխատանքը՝» որպես բանավոր հարցում ոչ պարտադիր տեսակները:

Ըստ ուսումնական առարկաների՝ միավորային գնահատումն իրագործվում է հետևյալ ձևով.

Բոլոր առարկաներից մեկ կիսամյակում բանավոր հարցման քանակը պետք է լինի առնվազն շաբաթական ժամաքանակին հավասար, բացառությամբ լեզուների, «Հասարակագիտություն» առարկայի 7-8-րդ դասարանների, «Հայրենագիտություն», «Համաշխարհային պատմություն», «Հայոց եկեղեցու պատմություն» և ՆԶՊ առարկաների, որոնց քանակը պետք է լինի շաբաթական ժամաքանակի առնվազն կրկնակին: II-IV դասարանների «Մայրենի» առարկայից բանավոր հարցման քանակը՝ կիսամյակում առնվազն 8 անգամ, «Ֆիզկուլտուրա» առարկայից՝ բոլոր դասարաններում առնվազն 2 անգամ:

Բոլոր առարկաներից կիսամյակային ամփոփիչ աշխատանքն անցկացվում է կիսամյակում մեկ անգամ՝ բացառությամբ «Երաժշտություն», «Ֆիզկուլտուրա», «Կերպարվեստ», «Տեխնոլոգիա», «ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն», «Շախմատ» առարկաների, «Օտար լեզու» առարկայի 3-րդ դասարանի առաջին կիսամյակի և «Ռուսաց լեզու» առարկայի 2- րդ դասարանի առաջին կիսամյակի, որոնք չունեն կիսամյակային ամփոփիչ աշխատանք:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են հանրակրթական հիմնական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում գործնական և թեմատիկ գրավոր աշխատանքների միավորային գնահատման նվազագույն քանակներն ըստ ուսումնական առարկաների՝ մեկ կիսամյակում:

Դպրոցական պարտադիր ժամերի բաշխումից կախված՝ ներկայացված քանակները կարող են ենթարկվել փոփոխության:

Հանրակրթական հիմնական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում միավորային գնահատման կիրառման նվազագույն քանակներն ըստ ուսումնական առարկաների

№	Ուսումնական առարկա	Դասարան	Գործնական աշխատանք Գ	Թեմատիկ գրավոր աշխատանք Թ
1.	Մայրենի	2-4	1	4
		5	1	7
		6	1	6
2.	Հայոց լեզու	7	1	3
		8-9	1	2
		10-12	-	2
3.	Գրականություն	7	1	2
		8-9	1	3
4.	Հայ գրականություն	10-12	-	3
5.	Ռուսաց լեզու	2 (II կիսամյակ*),	-	1
		3, 10-12	-	2
		4-9	-	3
6.	Օտար լեզու	3 (II կիսամյակ*),	-	1
		4-12	-	2
7.	Մաթեմատիկա	2-4	1	4
		5-6	1	5
8.	Երաժշտություն	2-7**	5	-
9.	Կերպարվեստ	2-7**	5	-
10.	Ես և շրջակա աշխարհը	2-4	1	1
11.	Հայրենագիտություն	5	1	1
12.	Բնագիտություն	5-6	1	1
13.	Աշխարհագրություն	6-8, 10-12	1	1
14.	Հայաստանի աշխարհագրություն	9	1	1
15.	Հայոց պատմություն	6-12	1	1
16.	Համաշխարհային պատմություն	6-12	1	1
17.	Հայոց եկեղեցու պատմություն	5-11	1	1
18.	Հասարակագիտություն	8-12	1	1
19.	Հանրահաշիվ	7-9	-	3
		10-12	-	2 և 1 կարճ
20.	Երկրաչափություն	7-9	1	2
		10-12	1	1 և 1 կարճ
21.	Ինֆորմատիկա	6-9	2	1 (կարճ ժամանակի համար)
		10-12	2	2 (կարճ ժամանակի համար)
22.	Ֆիզիկա	7-9	2	1
		10-12	2	2
23.	Քիմիա	7-12	2	1
24.	Կենսաբանություն	7-12	2	1
25.	Տեխնոլոգիա	2 և 7	6	-
		3-6	3	-
26.	ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն	8-11	3	-
27.	Ֆիզկուլտուրա	2, 3, 12	8	-
		4-11	12	-
28.	Շախմատ	2, 3	-	2

«Օտար լեզու» 3-րդ դասարանի առաջին կիսամյակում և «Ռուսաց լեզու» 2-րդ դասարանի առաջին կիսամյակում միավորային գնահատման ենթակա է միայն «բանավոր հարցում» բաղադրիչը, կիսամյակային գնահատականը որոշվում է միայն բանավոր հարցումից ունեցած գնահատականների գումարը դրանց քանակին բաժանելով:

**6-7-րդ դասարաններում «Կերպարվեստ» և «Երաժշտություն» առարկաներից մեկը, հաստատության ընտրությամբ, դասավանդվում է առաջին, մյուսը՝ երկրորդ կիսամյակում:

Ավագ դպրոցի բոլոր հոսքերում մաթեմատիկայի և լեզուների թեմատիկ աշխատանքների նվազագույն քանակը պետք է հավասար լինի առարկայի շաբաթական ժամաքանակին, իսկ մյուս առարկաների, ինչպես նաև երաշխավորվող լրացուցիչ առարկաների դեպքում՝ ժամաքանակի կեսին: Եթե վերջինս ամբողջ թիվ չէ, ապա վերցվում է դրան անմիջապես հաջորդող ամբողջ թիվը:

Կիսամյակային ու տարեկան գնահատականների ձևավորումը

Աշակերտի կիսամյակային գնահատականը բոլոր առարկաներից՝ բացառությամբ շաբաթական մինչև 1,5 ժամ ունեցող ուսումնական առարկաների,ձևավորվում է հետևյալ կերպ.

1. հաշվվում է կիսամյակի ընթացքում միավորային գնահատման բոլոր տեսակներից՝ բացառությամբ կիսամյակային աշխատանքից, աշակերտի ստացած գնահատականների միջին թվաբանականը և այն մոտարկվում է ամբողջ թվով,

2. հաշվվում է ստացված միջին թվաբանականի և կիսամյակային աշխատանքից ստացած գնահատականի միջին թվաբանականը և այն մոտարկվում է ամբողջ թվով:

Ստացված ամբողջ թիվը կլինի աշակերտի կիսամյակային գնահատականը:

Շաբաթական մինչև 1,5 ժամ ունեցող ուսումնական առարկաների դեպքում կիսամակային գնահատականը ձևավորվում է միավորային գնահատման բոլոր տեսակներից ստացված գնահատականների միջին թվաբանականով:

Ստորև ներկայացվում է աշակերտի կիսամյակային գնահատականի ձևավորման մի օրինակ:

Դիցուք աշակերտը «Երկրաչափություն» առարկայից մեկ կիսամյակում ըստ գնահատվող բաղադրիչների՝ ստացել է հետևյալ գնահատականները.

Բանավոր հարցում /Բ/ - 5; 4; 7; 6; 8

Գործնական աշխատանք /Գ/ - 5; 6

Թեմատիկ գրավոր աշխատանք /Թ/ - 6; 8

Կիսամյակային ամփոփիչ աշխատանք /Կ/ - 7

1. Ուսուցչի նշանակած միավորային գնահատականների միջին թվաբանականը՝ բացառությամբ կիսամյակային ամփոփիչ աշխատանքի գնահատականի, կլինի.

(5+4+7+6+8+5+6+6+8)/9=55/9≈6.1≈6:

2. Ստացված միջին թվաբանականի և կիսամյակային ամփոփիչ աշխատանքից ստացած միավորի միջին թվաբանականը կլինի.

(6+7):2=6.5≈7:

Այսպիսով, աշակերտի կիսամյակային գնահատականը (ԿԳ) 7 է:

Կիսամյակային գնահատականի ձևավորումը, դպրոցի տնօրինության և ուսուցչի ցանկությամբ, կարելի է իրականացնել առավել ամբողջական՝ գործակիցների կիրառմամբ:

Սովորողի տարեկան գնահատականը նրա ստացած երկու կիսամյակային գնահատականների միջին թվաբանականն է: Եթե ստացվածն ամբողջ թիվ չէ, ապա այն մոտարկվում է թվերի մոտարկման կանոնով:

Օրինակ՝ եթե մի կիսամյակային գնահատականը «6» է, իսկ մյուսը՝ «7», ապա տարեկան գնահատականը կլինի՝

(6+7):2=6.5≈7:

Ստուգման որևէ տեսակից բացակայելու դեպքում տվյալ աշխատանքի հետագա հանձնումը

Թեմատիկ, գործնական կամ կիսամյակային ամփոփիչ աշխատանքից բացակայած սովորողն այն կարող է հանձնել մինչև տվյալ կիսամյակի ամփոփումը:

Այդ աշխատանքներից սովորողի բացակա լինելը նշելու համար անկյունագծով կիսվում է համապատասխան վանդակը, վերևի մասում գրվում «բ» տառը, իսկ ներքևի մասում գրանցվում է հետագա հանձնումից ստացված թվանշանը:

Հանձնման գործընթացը կարգավորում է դասավանդող ուսուցիչը: Սովորողի՝ լրացուցիչ հանձնումից ստացած գնահատականը՝ օրինակ «7»-ը, գրանցվում է դասամատյանում հետևյալ ձևով՝

Այնուամենայնիվ, եթե մինչև կիսամյակի ամփոփումը սովորողը չի հանձնում աշխատանքը, ապա այդ աշխատանքին տրվում է «1» միավոր՝ գրանցելով այն համապատասխան վանդակում:

Գնահատման այլ սանդղակային միավորի փոխարկումը 10 միավորային սանդղակի համապատասխան միավորին

Հանրակրթության պետական չափորոշիչը թույլ է տալիս բացի 10 միավորային սանդղակից կիրառել նաև գնահատման այլ սանդղակներ: Այդպիսի դեպքերում ստացված միավորը 10 միավորային սանդղակի համարժեք միավորով արտահայտելն իրականացվում է հետևյալ բանաձևով՝

$n = \frac{s}{m} \cdot 10$, որտեղ s-ը այլ սանդղակով սովորողի ստացած միավորն է, m-ը նույն սանդղակի առավելագույն միավորն է, իսկ n-ը կլինի 10 միավորային սանդղակով սովորողի ստացած միավորը: Եթե n-ը ամբողջ թիվ չէ, ապա այն մոտարկվում է ամբողջ թվով:

Օրինակ՝ սովորողը 20 միավորային գնահատման սանդղակով ստացել է 15 միավոր: Համաձայն նշված բանաձևի՝

$s = 15$, $m = 20$, իսկ $n = \frac{15}{20} \cdot 10 = 7,5 \approx 8$:

Այսպիսով, սովորողի ստացած միավորի համարժեքը 10-միավորային սանդղակով կլինի 8 միավոր:

Ուսուցանող գնահատում

2012-2013 ուսումնական տարում ուսուցանող գնահատման գաղափարաբանությանը, կիրառվող ձևերին ու տեսակներին ուսուցիչները կծանոթանան վերապատրաստման դասընթացներում, ինչպես նաև կարող են այցելել ԿԱԻ-ի կայք էջը՝ aniedu.am և ծանոթանալ գրադարան բաժնում տեղակայված «Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան» ձեռնարկի բովանդակությանը: 2012-2013 ուսումնական տարում կիրառման են երաշխավորվում ուսուցանող գնահատման հետևյալ տեսակները՝ բանավոր հարցում, հայտորոշիչ թեստ, տնային աշխատանք:

Դրանց կիրառման քանակը թողնվում է ուսուցչի հայեցողությանը:

Գրանցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2012 թվականի օգոստոսի «23»-ի
Պետականգրանցման համարը 10512126
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարար
Ն. Նարիմանյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
«16» օգոստոսի 2012 թվականի N 145/Ն
ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
«18» օգոստոսի 2012 թվականի N 246 -Ն
ք. Ստեփանակերտ

Հ Ա Մ Ա Տ Ե Ղ Հ Ր Ա Մ Ա Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ, ԱՎԱԳ, ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ, ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՄ, ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՆԵՐՈՒՄ, ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 26-ի N 512-Ն որոշման 2-րդ կետին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. Հաստատել՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հիմնական, ավագ, միջնակարգ հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, կրթահամալիրներում, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների նախազորակոչային պատրաստության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ընդհանուր բաժնին՝սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Ս. Ասրյանին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Կարապետյանին:

4. Սույն հրամանի մասին տեղեկացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերի զորամասերի պետերին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչակազմերի ղեկավարներին և Ստեփանակերտի քաղաքապետին:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և
գիտության նախարարի
2012 թվականի
օգոստոսի 16-ի N 145/Ն
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարի 2012 թվականի
օգոստոսի 18-ի N 246 - Ն
համատեղ հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ, ԱՎԱԳ, ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ, ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՄ, ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՆԵՐՈՒՄ, ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնադրությունը մշակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հիմնական, ավագ, միջնակարգ հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, կրթահամալիրներում, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում նախազորակոչային պատրաստության կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 27-ի N 161 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 512-Ն որոշման 2-րդ կետի համաձայն և նախատեսված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հիմնական, ավագ, միջնակարգ հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, կրթահամալիրներում, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ ուսումնական հաստատություն) սովորողների նախազորակոչային պատրաստությունը կազմակերպելու և անցկացնելու համար:

2. Ուսումնական հաստատությունների (անկախ կազմակերպական-իրավական ձևից և ենթակայությունից) սովորողների նախազորակոչային պատրաստությունն իրականացվում է «Զինապարտության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության այլ իրավական ակտերի, ինչպես նաև սույն կանոնադրության համաձայն պատանիներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերում ծառայության նախապատրաստելու նպատակով:

3. Ուսումնական հաստատություններում նախազորակոչային պատրաստությունն իրականացվում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքների կազմակերպման միջոցով:

4. Ուսումնական հաստատությունում «Նախնական զինվորական պատրաստության» հիմնական խնդիրներն են՝

1) ապահովել սովորողների կողմից «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի պետական ուսումնական ծրագրի յուրացումը,

2) սովորողներին պարզաբանել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերի խնդիրները, առանձնահատկությունները ու նշանակությունը,

3) սովորողների մեջ դաստիարակել ազգային բանակում ծառայելու անհրաժեշտության զգացումը,

4) կազմակերպել զինվորական երդման, համազորային կանոնադրությունների պահանջների ուսումնասիրում և դաստիարակել դրանք անվերապահորեն կատարելու պատրաստակամություն,

5) պատանիներին ծանոթացնել զորամասերի ռազմական անձնակազմի կյանքին ու կենցաղին, զենքին ու զինվորական տեխնիկային,

6) տեսական և գործնական պատրաստության միջոցով իրականացնել սովորողների շարային և հրաձգային պատրաստությունը,

7) սովորողներին զինել անհրաժեշտ ռազմական գիտելիքներով, ապահովել մարտավարության ու քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցերի հիմունքների յուրացումը,

8) սովորողների մոտ ձևավորել ռազմակիրառական կարողություններ, հմտություններ, կամային բարձր հատկանիշներ, առաջին բուժօգնություն, ինքնօգնություն, փոխօգնություն ցուցաբերելու ունակություն,

9) սովորողների մոտ ձևավորել քաղաքացիական պաշտպանության ազդանշաններով գործելու, պաշտպանական կառույցներից և անհատական պաշտպանական միջոցներից օգտվելու ունակություն, արտակարգ իրավիճակներում գործելու հմտություն և անհրաժեշտ վարվելակերպ,

10) դաստիարակել հայոց բանակի պատմական ավանդույթներին ծանոթ, ֆիզիկապես և բարոյապես առողջ, դիմացկուն, բազմակողմանի զարգացած, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ պատանիներ և աղջիկներ,

11) սովորողների շրջանում իրականացնել մասնագիտական կողմնորոշման աշխատանք՝ ըստ նախասիրությունների ռազմական ուսումնական հաստատություններ ընդունվելու նպատակով:

5. Ուսումնական հաստատությունում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան դասավանդում է զինվորական ղեկավարը, իսկ առաջին բուժօգնության հիմունքների դասավանդումը իրականացվում է բժիշկների, միջին բուժանձնակազմի, պետական հումանիտար բուհերի քաղաքացիական պաշտպանության պահեստազորի միջին բուժանձնակազմի վկայական ունեցող շրջանավարտների (որոնք ունեն առաջին բուժօգնություն դասավանդելու իրավունք), ինչպես նաև առաջին բուժօգնության վերապատրաստման դասընթացներ անցած և համապատասխան որակավորում ստացած զինվորական ղեկավարների միջոցով:

6. Սովորողների հետ տարվող ռազմահայրենասիրական աշխատանքն ընդհանուր դաստիարակչական աշխատանքի բաղկացուցիչ մասն է և իրականացվում է պլանավորված կարգով՝ դասղեկի, մյուս մանկավարժների և զինղեկի կողմից՝ տնօրենի ղեկավարությամբ:

II. ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

7. Սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման ընդհանուր ղեկավարումն ու հսկողությունն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը՝ համագործակցելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայության հետ:

8. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության, Լեռնային Ղարաբաղի Հանրա-

☞ 10

ԽՈՍՔ

պետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր սպորտի պետական կոմիտեի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փրկարար ծառայության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության, այլ շահագրգիռ նախարարությունների հետ համատեղ մշակում են հրամաններ, հրահանգներ, ուսումնական ծրագրեր, մեթոդական և այլ նորմատիվ փաստաթղթեր, միջոցառումների պլաններ, որոնք առնչվում են «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացմանը, կազմակերպում և ուսումնասիրում են սովորողների հետ տարվող ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքի և «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման որակը՝ համաձայն սույն կանոնադրության 7-րդ գլխի և ենթահավելվածի:

9. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը՝

1) իրականացնում է սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման ընդհանուր ղեկավարումը,

2) ապահովում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքների անցկացման անհրաժեշտ մակարդակը,

3) համակարգում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրերի, դասագրքերի, հաշվետախտակի, հրահանգների հանձնարարականների, մեթոդական և այլ նորմատիվ փաստաթղթերի մշակման և ներդրման աշխատանքները,

4) կազմակերպում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի վերաբերյալ ուսումնադիտողական նյութերի մշակումն ու հրատարակումը,

5) ուսումնասիրում, ընդհանրացնում և տարածում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման աշխատանքի դրական փորձը, նյութական և բարոյական խրախուսանքի արժանացնում լավագույն ուսումնական հաստատություններին և աշխատողներին, կազմակերպում է «Լավագույն զինղեկ» մրցույթը,

6) մասնակցում է զինղեկների, առաջին բուժօգնության հիմունքներ դասավանդողների որակավորման բարձրացման աշխատանքներին, անցկացնում է նրանց ատեստավորումը,

7) մշակում է զինղեկների պատրաստման, վերապատրաստման և ատեստավորման կարգը՝ համագործակցելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ,

8) ղեկավարում և վերահսկում է սովորողների ֆիզիկական պատրաստության վիճակը, մեթոդական օգնություն է ցույց տալիս ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներին և զինղեկներին ուժային վարժությունների անցկացման հարցերում,

9) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր սպորտի պետական կոմիտեի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն փրկարար ծառայության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության հետ համատեղ կազմակերպում և անցկացնում է ռազմամարզական խաղեր, մրցումներ, գիտակրթական կոնֆերանսներ և այլ միջոցառումներ,

10) իրականացնում է նաև սույն կանոնադրությունից բխող այլ լիազորություններ:

10. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունը՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր սպորտի պետական կոմիտեի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայության հետ համատեղ աջակցում է սովորողների ռազմադաշտային պարապմունքների (հավաքների) «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի օլիմպիադաների և ռազմամարզական խաղերի անցկացմանը,

2) պահեստազորի սպաներից ներկայացնում է զինղեկների թեկնածուներ,

3) «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման որակի մասին առաջարկություններով դիմում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը,

4) իրականացնում է զինղեկների վերապատրաստման աշխատանքները ռազմական գիտելիքների մասով,

5) ուսումնական հաստատությանը կցում է զորամաս, որը մշտապես աջակցում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի կազմակերպմանը,

6) կազմակերպում է սովորողների այցելություններ զորամաս, բաց դռների օրեր, հանդիպումներ մարտական գործողությունների մասնակիցների, մարտական պատրաստության գերազանցիկների հետ,

7) սովորողներին ծանոթացնում է ռազմական տեխնիկային, զինծառայողների կյանքին ու կենցաղին,

8) գործնական պարապմունքների անցկացման համար առանձնացնում է սպաների, ենթասպաների և սերժանտների, տրամադրում է հրաձգարաններ, զենք, փամփուշտներ և այլ անհրաժեշտ միջոցներ,

9) օգնություն է ցույց տալիս զինկոմիսարիատներին զինղեկների հետ ցուցադրական պարապմունքներ անցկացնելիս,

10) օժանդակում է ուսումնական հաստատությունների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնական ու նյութատեխնիկական բազայի հարստացմանը:

11. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարությունը՝

1) մասնակցում է զինղեկների առաջին բուժօգնության հիմունքների ուսուցման գործընթացին,

2) ուսումնական հաստատություններում բժշկական գիտելիքների հիմունքների ուսուցման որակի մասին առաջարկություններով դիմում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը,

3) իրականացնում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի պլանավորումը բժշկական գիտելիքների մասով:

12. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայությունը՝

1) մասնակցում է զինղեկների վերապատրաստման աշխատանքներին՝ արտակարգ իրավիճակների հիմնահարցերի ուսուցման մասով,

2) ուսումնական հաստատություններում արտակարգ իրավիճակների հիմնահարցերի ուսուցման որակի մասին առաջարկություններով դիմում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը,

3) աջակցում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնատեխնիկական բազայի հարստացմանը,

4) իրականացնում է առարկայի պլանավորումը՝ արտակարգ իրավիճակների հիմնահարցերի մասով,

5) գործնական պարապմունքների անցկացման նպատակով ուսումնական հաստատություններին առաջարկում է քաղաքացիական պաշտպանության կառույցներ (ապաստարաններ, հակաճառագայթային թաքստոցներ) և անհատական պաշտպանական միջոցներ:

13. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանությունը՝

1) մշակում և հրատարակում է մեթոդական ձեռնարկներ «Զենքի հետ անվտանգ վարվելու կանոնների», «Հասարակական կարգի պահպանման», «Քաղաքացիական պարտքի գիտակցման», «Ոստիկանություն-ուսումնական հաստատություն լիարժեք կապի ստեղծման» վերաբերյալ, օժանդակում է ուսումնական և նյութատեխնիկական բազայի հարստացմանը,

2) տանում է քարոզչական աշխատանքներ ոստիկանական ուսումնական հաստատություններ ընդունվելու հետ կապված թեկնածուներ ընտրելու համար,

3) պարբերաբար ուսումնական հաստատություններում անցկացնում է մեթոդական աշխատանքներ, հրահանգավորումներ, գործնական պարապմունքներ մանկավարժական կոլեկտիվի և սովորողների հետ՝ հասարակական կարգի պահպանման, քաղաքացիական պարտքի գիտակցման, արտակարգ իրավիճակներից խուսափելու համար համապատասխան թեմաներով,

4) ուսումնական տարին մեկ անգամ ուսումնական հաստատություններում ուսումնասիրում է զենքի պահման պայմանները և հատկացված զենքի ու ռազմամթերքի առկայությունը:

14. Լեռնային Ղարաբաղի Հանրապետո1ության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը՝

1) աջակցում է ուսումնական հաստատությունների՝ զորամասերի, սահմանապահ ուղեկալների հետ կապերի ամրապնդմանը, սովորողների և զինվորական ղեկավարների հետ ռազմադաշտային պարապմունքների (հավաքների) անցկացմանը,

2) զորամասերի հրամանատարների, կրթության ոլորտի և այլ շահագրգիռ մարմինների հետ համատեղ սովորողների համար կազմակերպում է մարտական փամփուշտներով հրաձգություն, ռազմահայրենասիրական խաղեր, մրցումներ, այլ միջոցառումներ,

3) կրթական ոլորտի և այլ շահագրգիռ մարմինների հետ ուսումնական հաստատություններում ստեղծում է «Սահմանապահի պատանի ընկերներ» ռազմահայրենասիրական բնույթի ակումբներ և աջակցում ակումբների աշխատանքներին,

4) կազմակերպում է համատեղ խորհրդակցություններ շահագրգիռ նախարարությունների հետ պետական սահմանի պահպանման, քաղաքացիական պարտքի գիտակցման և այլ թեմաներով,

5) ուսումնական հաստատությունները կցում է ուղեկալի կամ զորամասի, որը մշտական օգնություն է ցույց տալիս «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի և ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպման գործում,

6) կազմակերպում է սովորողների այցելություններ ուղեկալ, սահմանապահ զորքերի ուսումնական կենտրոն, բաց դռների օրեր, հանդիպումներ մարտական գործողությունների մասնակիցների, մարտական պատրաստության գերազանցիկների հետ,

7) սովորողներին ծանոթացնում է ռազմական տեխնիկային, զինվորական ծառայողների կյանքին ու կենցաղին,

8) պարապմունքների համար տրամադրում է հրաձգարաններ, ինքնաձիգ հրազեն, փամփուշտներ, այլ անհրաժեշտ միջոցներ,

9) սովորողների հետ գործնական պարապմունքներ անցկացնելու նպատակով առաջարկում է թեկնածություններ սպաների, ենթասպաների, սերժանտների կազմից,

10) օժանդակում է ուսումնական հաստատությունների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնական ու նյութատեխնիկական բազայի հարստացմանը:

III. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

15. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարները և Ստեփանակերտի քաղաքապետը, իրենց ենթակայության տակ հիմնական, ավագ, միջնակարգ հանրակրթական դպրոցներ, վարժարաններ, կրթահամալիրներ, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ունեցող նախարարությունների և գերատեսչությունների համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները, ոչ պետական նմանատիպ ուսումնական հաստատությունների հիմնադիրները՝

1) վերահսկողություն են սահմանում համաձայն ուսուցիչների և մանկավարժների ընտրության մրցութային սահմանված կարգի՝ հիմնական, ավագ, միջնակարգ ուսումնական հաստատություններում պարտադիր հիմունքներով զինվորական ղեկավարների ընտրության և նշանակման ընթացակարգի վրա,

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժինների աշխատողների թվից նշանակում են «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման պատասխանատու աշխատողի (մասնագետի),

3) զինկոմիսարիատների, կցված զորամասերի և ուսումնական հաստատությունների տնօրենների հետ համատեղ մշակում են «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի միջոցառումների պլաններ, կազմակերպում այդ միջոցառումների նախապատրաստումը և անցկացումը:

16. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում և Ստեփանակերտ քաղաքում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի և ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքների համակարգված կազմակերպման համար, զինղեկների կողմից ընտրվում է ավագ զինղեկ, որի մասին տեղեկացվում է տարածքային զինվորական կոմիսարը: Զինվորական կոմիսարը այդ մասին ի գիտություն է հայտնում տվյալ տարածքի բոլոր ուսումնական հաստատությունների տնօրեններին: Ավագ զինղեկը՝

1) պատասխանատու է ուսումնական հաստատություններում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման, ռազմահայրենասիրական դաստիարակության ու քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության աշխատանքների կազմակերպման համար,

2) իրականացնում է մշտական կապ տարածքային զինկոմիսարիատի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայության տարածքային ստորաբաժանումների և կցված զորամասերի հետ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքների բարելավման նպատակով,

3) կազմակերպում է ուսումնական հաստատություններում ուսումնական զենքի, ռազմամթերքի, փոքր տրամաչափի հրացանների, նյութատեխնիկական բազայի տարրերի պահպանումն ու նպատակային օգտագործումը,

4) ղեկավարում է տարածքի «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի մեթոդմիավորման աշխատանքները, կազմակերպում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի աշխատանքները տարածքում,

5) աջակցում է տարածքային զինվորական կոմիսարիատին անհրաժեշտ աշխատանքների կատարմանը (դիսպանսերիզացիա, կցագրում զորակոչ, զորահավաք, ռազմական ուսումնական հաստատությունների թեկնածուների ընտրություն, փաստաթղթերի պատրաստում),

6) նոր նշանակված զինվորական ղեկավարներին ուղարկում է ուսումնամեթոդական հավաքների և որակավորման դասընթացների,

7) պատրաստում և զինվորական կոմիսարիատ է ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր՝ զինղեկներին օրենքով սահմանված կարգով հերթական զինվորական կոչում շնորհելու համար,

8) ներկայացնում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի և նյութատեխնիկական բազայի վերաբերյալ հաշվետվություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) կրթության բաժիններին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

17. Ուսումնական հաստատության տնօրենը՝

1) պատասխանատվություն է կրում սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն»

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպման համար,

2) ապահովում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրով նախատեսված տեսական և գործնական պարապմունքների անցկացման անհրաժեշտ պայմաններ և ուսումնանյութատեխնիկական բազա, անհրաժեշտ տարրերով,

3) զինղեկին ցույց է տալիս մեթոդամանկավարժական օգնություն իրականացնելու միջառարկայական կապերը,

4) վերահսկում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդման դրվածքը, արդյունքները քննարկում է մանկավարժական խորհրդի նիստում,

5) ուսումնական հաստատության կողմից տրված հայտարարության հիման վրա, սահմանված ժամկետում պահեստազորի սպաներից ներկայացնում է բարձրագույն ռազմական կրթությամբ կամ բարձրագույն կրթությամբ և համապատասխան վերապատրաստում անցած թեկնածուների տվյալները: Ուսումնական հաստատության տնօրենը մրցույթ կազմակերպելու համար ստեղծում է հանձնաժողով, որի կազմում պարտադիր ընդգրկվում է տվյալ տարածքի ավագ զինղեկը: Մրցույթի անցկացման տեսական և գործնական առաջադրանքների հարցաշարը կազմում է ավագ զինղեկը: Ուսումնական հաստատության տնօրենը մրցույթում հաղթած թեկնածուին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակում է ուսումնական հաստատության զինվորական ղեկավար՝ նրա հետ կնքելով համապատասխան աշխատանքային պայմանագիր:

18. Զինղեկը՝

1) անմիջականորեն ենթարկվում է ուսումնական հաստատության տնօրենին: Նա պատասխանատու է սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդման, սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքների կազմակերպման, ուսումնական զենքի, ռազմամթերքի, փոքր տրամաչափի հրացանների, նրանց փամփուշտների հաշվառման, պահպանման ու նպատակային օգտագործման, գործնական պարապմունքների անցկացման ընթացքում անվտանգության կանոնների պահպանման համար, համաձայն «Զենքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի և նրանից բխող իրավական ակտերի,

2) անձամբ նախապատրաստում և անցկացնում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդումը, ղեկավարում է ռազմական գործն ուսումնասիրող խմբակների աշխատանքը,

3) տնօրինում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի կաբինետը, զենքի պահպանման սենյակը, հրաձգային տիրը, «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնանյութատեխնիկական բազան,

4) հաշվառում և պահպանում է ուսումնական զենքը, փոքր տրամաչափի հրացանները, դրանց փամփուշտները՝ համաձայն «Զենքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի և նրանից բխող այլ իրավական ակտերի պահանջների,

5) ուսումնական հաստատության ղեկավարության և մանկավարժական կոլեկտիվի հետ համատեղ իրականացնում է սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը,

6) սովորողներին մասնակից է դարձնում հրաձգության, ռազմակիրառական մարզաձևերի ու քաղաքացիական պաշտպանության համայնքային, շրջանային, հանրապետական մրցումներին,

7) առավելագույնս օգտագործում է գործնական պարապմունքներ անցկացնող ստանձնած զորամասերի, կազմակերպությունների հնարավորություններն ու օժանդակությունը՝ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի աշխատանքի որակը բարելավելու համար,

8) զինվորական կոմիսարիատների հետ համատեղ ուսումնական հաստատություններում կազմակերպում է բացատրական, քարոզչական աշխատանքներ՝ պատանիների ռազմական մասնագիտություն ընտրելու, ռազմական ուսումնական հաստատություններ ընդունվելու նախապատրաստման համար, անհրաժեշտության դեպքում տնօրինության միջոցով ռազմական ուսումնական հաստատության դիմորդ-թեկնածուների համար քննական առարկաներից կազմակերպում է լրացուցիչ պարապմունքներ,

9) մշտապես բարձրացնում է իր մասնագիտական զինվորական և մանկավարժական կրթամակարդակը,

10) ուսումնական հաստատության դասղեկների (կուրսղեկների) հետ միասին կազմակերպում է նախազորակոչային տարիքի պատանիների զինվորական հաշվառման (կցագրման) համար անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստումը և, համագործակցելով զինվորական կոմիսարիատի հետ, ապահովում է նրանց ներկայությունը կցագրման տեղամասեր,

11) մասնակցում է զինվորական կոմիսարիատի կողմից կազմակերպվող ուսումնամեթոդական հավաքներին և մեթոդական պարապմունքներին, զորահավաքային աշխատանքներին, ուսումնական հաստատությանը կցված զորամասերի ուսումնական (ցուցադրական) զորավարժություններին:

19. Զինղեկի աշխատանքը կարգավորվում է դասացուցակով, միջոցառումների ծրագրերով, տնօրենի կողմից հաստատված անհատական պլանով:

20. Զինղեկը կարող է ներգրավվել ուսումնական հաստատության հերթապահությանը:

21. Զինղեկը վարչական և դասղեկական պարտականություններ չի կարող ստանձնել:

22. Զինղեկը՝ ուսումնական հաստատությունում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի հետ մեկտեղ չի կարող դասավանդել այլ ուսումնական հաստատությունում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության համակարգում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության համակարգում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայության համակարգում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության համակարգում:

23. Զինղեկի կողմից դասավանդվող շաբաթական մինչև 11 ժամը համարվում է մեկ միավոր.

1) հանրակրթական (հիմնական, ավագ, միջնակարգ, վարժարան, կրթահամալիր) ուսումնական հաստատություններում սահմանվում է զինվորական ղեկավարի հաստիք և վարձատրվում է հանրակրթական ոլորտի համար հաստատված մանկավարժական դրույքաչափերով (մինչև 6 դասարան ունեցող ուսումնական հաստատությունների համար 0,5 միավոր, իսկ 6 և ավելի դասարան ունեցող ուսումնական հաստատությունների համար՝ մեկ միավոր),

2) քաղաքացիական պաշտպանության աշխատանքների համար զինվորական ղեկավարը վարձատրվում է ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի համար նախատեսված դրույքաչափերով, մինչև 6 դասարան ունեցող ուսումնական հաստատության համար՝ սպասարկող անձնակազմի միջին աշխատավարձի 0,3 միավոր, իսկ 6 և ավելի դասարան ունեցող ուսումնական հաստատության համար՝ սպասարկող անձնակազմի միջին աշխատավարձի 0,5 միավոր,

3) նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սահմանվում է զինվորական ղեկավարի հաստիք և վարձատրվում է միջին մասնագիտական ոլորտի համար հաստատված դրույքաչափերով (մինչև 100 սովորող ունեցող ուսումնական հաստատության համար՝ 0,5 միավոր, 100 և ավելի սովորող ունեցող ուսումնական հաստատության համար՝ մեկ միավոր),

4) քաղաքացիական պաշտպանության աշխատանքների կատարման դիմաց վարձատրվում է ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի համար նախատեսված դրույքաչափերով մինչև 100 սովորող ունեցող նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության համար՝ 0,3 միավոր, իսկ 100 և ավելի սովորող ունեցող նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության համար՝ 0,5 միավոր:

24. Զինղեկը պարտավոր է աշխատանքի ընթացքում կրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից հաստատված նմուշի զինվորական համազգեստ, որը հատկացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության միջոցներով և հայտերով: Զինղեկն իրականացնում է ուսումնական հաստատության քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը:

IV. «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

25. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի շաբաթական ժամաքանակն ըստ դասարանների և ուսումնական խմբերի սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված տարեկան ուսումնական պլաններին համապատասխան: «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան համարվում է ուսումնական պլանով նախատեսված պարտադիր առարկա:

26. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագիրը մշակում և հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության հետ:

27. Յուրաքանչյուր ուսումնական հաստատությունում մշակվում և հաստատվում է տարեկան պլան՝ ըստ շաբաթների:

28. Պարապմունքների անցկացման ժամանակ դասարանները (խմբերը) համարվում են դասակներ և բաժանվում են ջոկերի, որոնց հրամանատարները, զինղեկի ներկայացմամբ, նշանակվում են տնօրենի հրամանով:

29. Պարապմունքների ընթացքում ձեռք բերած գիտելիքների և ունակությունների ամրապնդման նպատակով, ռազմագիտության ամփոփիչ փուլում կցված զորամասի բազաներում անցկացվում են ծրագրով նախատեսված ռազմադաշտային պարապմունքներ (հավաքներ):

Պարապմունքների համար սահմանված ժամաքանակը կարող է երկարացվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փրկարար ծառայության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության կողմից համատեղ սահմանված կարգով:

30. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան գնահատվում է կիսամյակային և տարեկան գնահատականներով՝ ընթացիկ գնահատականների հիման վրա:

31. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայից սովորողները ազատվում են միայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի սահմանած կարգով:

32. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի լրիվ դասընթացն ավարտած պատանիների ցուցակը՝ ամփոփիչ գնահատականներով, ուղարկվում է նրանց գրանցման վայրի զինկոմիսարիատ:

33. Ուսումնական հաստատություններում ռազմահայրենասիրական աշխատանքները կազմակերպվում և անցկացվում են ուսումնական և աշխատանքային պլաններին համապատասխան: Այդ աշխատանքներն իրականացվում են սովորողների մեջ բարոյականային հատկանիշներ, կարգապահության ու զինվորական ծառայության նկատմամբ պատասխանատու վերաբերմունք, ինչպես նաև՝ հայրենիքին և նրա պաշտպանությանը նվիրվածություն դաստիարակելու նպատակով:

34. Նախազորակոչային պատրաստության արդյունքների և հսկողության անցկացման վերաբերյալ եզրակացությունը ներկայացվում է՝ համաձայն սույն կանոնադրության ձև 4-ի:

V. ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

35. Սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման համար նյութատեխնիկական բազան ապահովում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության, այլ շահագրգիռ նախարարությունները և գերատեսչությունները, որոնց ենթակայության տակ գտնվում են ուսումնական հաստատությունները՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունը՝ ուսումնական զենքով, ռազմամթերքով, փոքր տրամաչափի հրացաններով և նրանց փամփուշտներով՝ «Զենքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և նրանից բխող իրավական ակտերով սահմանված կարգով,

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարությունը՝ բժշկական գիտելիքների ուսուցման համար անհրաժեշտ ուսումնամեթոդական պարագաներով,

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայությունը՝ քաղաքացիական պաշտպանության ուսումնական գույքով, պաշտպանական անհատական միջոցներով, ճառագայթային և քիմիական հետազոտության սարքերով:

36. Ուսումնական զենքի, ռազմամթերքի, փոքր տրամաչափի հրացանների և նրանց փամփուշտների ստացումը, հաշվառումը և պահպանումը կատարվում է «Զենքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և նրանից բխող իրավական ակտերով սահմանված կարգով:

37. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրի պահանջներին համապատասխան յուրաքանչյուր ուսումնական հաստատությունում ստեղծվում է ուսումնական նյութատեխնիկական բազա, որն անընդհատ կատարելագործվում և համալրվում է:

38. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի նյութատեխնիկական բազան ընդգրկում է՝

1) հատուկ կահավորված դասասենյակ, որն օգտագործվում է միայն «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման համար,

2) ուսումնական զենքն ու ռազմամթերքը, փոքր տրամաչափի հրացանները, դրանք պահելու համար կահավորված զենքի պահպանման սենյակը,

3) մարտավարության, շարային պատրաստության և քաղպաշտպանության պարապմունքների վայրերը,

4) ֆիզիկական կուլտուրայի, ուժային վարժությունների, պաշտպանամարզական միջոցառումների հրապարակները,

5) ժամապահի, օրապահի պարտականությունների գործնական պարապմունքների անցկացման կետերը,

6) ուսումնական զենքի մաքրման և յուղման, հրաձգության գործնական հնարքների կատարման մշակման տեղերը,

7) ուսումնադիտողական ձեռնարկները, ուսուցման տեխնիկական միջոցները, անհրաժեշտ այլ գույքը:

Հրաձգության տիրը և բժշկական գիտելիքների հիմունքների դասասենյակի առկայությունը ցանկալի է:

☞12

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

11 ☜

VI. ՁԻՆՈՂԵԿՆԵՐԻ «ՆԱԽՆԱԿԱՆ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

39. Ձինվորական ղեկավարների, «Նախնական զինվորական պատրաստությունե առարկայի ուսուցիչների վերապատրաստումը և ատեստացիան անց է կացվում «Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն:

40. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցիչների և զինվորական ղեկավարների բժշկական գիտելիքների հիմունքների և արտակարգ իրավիճակների ու քաղաքացիական պաշտպանության մասով որակավորման բարձրացումն իրականացնում է լիազոր պետական մարմինը՝ համագործակցելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարությունների և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայության հետ:

41. Համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 12-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման տարածքային, ինչպես նաև որակավորման տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովների ձևավորման և գործունեության, հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման և որակավորման տարակարգի շնորհման, ինչպես նաև ատեստավորման միջոցով որակավորում ստացած պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչներին հավելավճար տալու կարգերը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 920-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 225-Ն որոշման.

1) սահմանվում է ատեստավորման միջոցով որակավորման տարակարգ ստացած զինղեկին, ըստ մասնագիտական կրթության որակավորման աստիճանների, հավելավճար տալու պայմանները,

2) համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 12-ի N 225-Ն որոշմամբ սահմանված կարգի ատեստավորման միջոցով որակավորման տարակարգ ստացած զինղեկին ուսումնական հաստատությանը հատկացված միջոցների հաշվին տրվում է հավելավճար՝

ա. չորրորդ աստիճանի որակավորման համար՝ մանկավարժական դրույքի 50 տոկոսի չափով.

բ. երրորդ աստիճանի որակավորման տարակարգի համար՝ մանկավարժական դրույքի 30 տոկոսի չափով.

գ. երկրորդ աստիճանի որակավորման տարակարգի համար՝ մանկավարժական դրույքի 20 տոկոսի չափով.

դ. առաջին աստիճանի որակավորման տարակարգի համար՝ մանկավարժական դրույքի 10 տոկոսի չափով,

3) ատեստավորման միջոցով որակավորման տարակարգ ստացած զինղեկի հասանելիք հավելավճարը տրվում է յուրաքանչյուր ամիս՝ աշխատավարձի հետ միասին,

4) սույն կարգով սահմանված հավելավճարները տրվում են միայն հանրակրթական ուսումնական հաստատությունում աշխատող զինղեկներին:

42. Հանրակրթական ուսումնական հաստատության զինվորական ղեկավարի որակավորման առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ աստիճանների տարակարգերի բնութագրիչները և որակավորման առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ տարակարգերի շնորհման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը ներառված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի ապրիլի 23-ի N 62-Ն հրամանի NN 1, 2, 3, 4 հավելվածներում:

VII. ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ

43. Ուսումնական հաստատության սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման որակի և ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքների ստուգման նպատակն է՝

1) ուսումնասիրել «Ձինապարտության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի, այլ օրենսդրական ակտերի, զինապարտության հարցերին առնչվող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշումների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության, իրենց ենթակայության տակ ուսումնական հաստատություններ ունեցող այլ նախարարությունների և գերատեսչությունների հրամանների, հրահանգների, շրջաբերական նամակների, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ուսումնական հաստատություններում սովորողների նախազորակոչային պատրաստության կանոնադրության պահանջների կատարումը,

2) ուսումնասիրել սովորողների նախնական զինվորական պատրաստություն առարկայի ուսուցման կազմակերպման վիճակը, ռազմահայրենասիրական և պաշտպանազանգվածային աշխատանքների կազմակերպման դրվածքը,

3) ստուգել սովորողների ֆիզիկական պատրաստվածության մակարդակը, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցերի, ռազմակիրառական կարողությունների յուրացման և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերում ծառայելու պատանիների նախապատրաստվածության աստիճանը,

4) օգնություն ցույց տալ զորամասերին, զինկոմիսարիատներին, կրթության մարմիններին, ուսումնական հաստատություններին՝ պատանիների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության որակի և արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

44. Սովորողների՝ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնասիրման և ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքի վերահսկողությունն իրականացնում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության և շահագրգիռ նախարարությունները՝ իրենց համապատասխան ստորաբաժանումների միջոցով:

45. Ստուգումները կարող են իրականացնել համալիր ձևով՝ ընդգրկելով «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության ամբողջ գործընթացը կամ մասնակի՝ առանձին հարցերի (թեմատիկ) ներառմամբ:

46. Ուսումնական հաստատությունները սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքի վերահսկողությունն իրականացնում են համաձայն իրենց պլանների և արդյունքները պարտադիր կարգով քննարկում մանկավարժական խորհրդի կամ խորհրդի նիստերում:

47. Հանրապետական և շրջանային (տարածքային) ստուգումներն իրականացվում են համապատասխան հանձնաժողովների կողմից: Հանձնաժողովի կազմը սահմանվում է ստուգումն իրականացնող մարմնի (մարմինների) հրամանով:

48. Ստուգող հանձնաժողովները նախապես հրահանգավորվում են:

49. Սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքի վերահսկողությունն անընդհատ գործընթաց է և ներառում է չորս փուլ՝

1) նախապատրաստական աշխատանք,

2) ստուգումներ և ուսումնասիրություն, աշխատանքի գնահատում և ամփոփում, հանձնարարականներ,

3) ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքներով սահմանված ձևի տեղեկանքների պատրաստում,

4) ընդունված որոշումների, արձակված հրամանների կատարման վերահսկողություն:

50. Ստուգումների արդյունքների հիման վրա կազմվող փաստաթղթերի (տեղեկանք) ցանկը և ձևերը տրվում են սույն կանոնադրության 1-3 ձևերում:

51. Ուսումնական հաստատությունները «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի և նյութատեխնիկական բազայի վերաբերյալ համալիր ստուգման են ենթարկվում երեք տարին մեկ անգամ: Առանձին հարցերի վերաբերյալ (թեմատիկ) ստուգումներ են կատարվում ըստ անհրաժեշտության: «ԱՆԲԱՎԱՐԱՐ» գնահատական ստացած ուսումնական հաստատությունները վերստուգվում են մեկ տարի անց:

52. Համալիր ստուգմանը հատկացվում է 3-5 օր, իսկ թեմատիկ ստուգմանը՝ 1-3 օր: Ստուգումների հարցաշարում նախատեսվում են՝ ուսումնական գործընթացի կազմակերպման ու «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրի կատարման, զինղեկի մեթոդական պատրաստության ու նրա կողմից անցկացվող պարապմունքների որակի, ուսումնական, նյութատեխնիկական բազայի կատարելագործման, ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքների և նախնական զինպատրաստության ղեկավարման դրվածքի հարցերը:

53. Ուսումնական հաստատությանը ընդհանուր գնահատական դրվում է սովորողների կողմից «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրի յուրացման որակի, զինղեկի վարած պարապմունքների վերլուծության, ուսումնանյութական բազայի և ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքի վիճակի համար նշանակված գնահատականների հիման վրա: Հաշվի են առնվում նաև վիճակի համար նշանակված գնահատականների հիման վրա, հաշվի առնելով նաև սովորողների ֆիզիկական պատրաստությունը, նրանց կողմից բազմամարտի նորմաների հանձնման արդյունքները և ուժային վարժանքների կատարման կարողությունը:

54. Սովորողների կողմից ծրագրի յուրացման աստիճանը որոշվում է պարապմունքների ընթացքում նրանց ստացած գնահատականների հիման վրա: Ըստ այդ գնահատականների նշանակվում է ուսումնական հաստատության ընդհանուր գնահատականը.

1) «ԳԵՐԱԶԱՆՑ» է նշանակվում, եթե ստուգված սովորողների առնվազն 90 %-ը ստացել է դրական գնահատական, այդ թվում 55 %-ը՝ «ԳԵՐԱԶԱՆՑ»:

2) «ԼԱՎ» գնահատական նշանակվում է, եթե ստուգված սովորողների առնվազն 80 %-ը ստացել է դրական գնահատականներ, ընդ որում՝ առնվազն 55 %-ի «ԼԱՎ» և «ԳԵՐԱԶԱՆՑ», «ԲԱՎԱՐԱՐ» ստանալու դեպքում:

55. Ծրագրի յուրացման որակի ստուգման համար ուսումնական հաստատությանը գնահատական է նշանակվում, եթե ստուգվել է առնվազն 2 դասարան (խումբ): Գիտելիքների, ունակությունների և կարողությունների գնահատումը կատարվում է անցած թեմաների յուրացման ստուգմամբ:

56. Ձինղեկի անցկացրած պարապմունքների որակը ստուգվում է առնվազն 2 դասի անցկացման ընթացքում և գնահատվում է «ԳԵՐԱԶԱՆՑ», «ԼԱՎ», «ԲԱՎԱՐԱՐ» և «ԱՆԲԱՎԱՐԱՐ»: Դասը գնահատելիս հաշվի է առնվում դասի բովանդակության համապատասխանությունը ծրագրի պահանջներին, գաղափարական մակարդակն ու դասի դաստիարակչական նշանակությունը, դասավանդման մեթոդների ճիշտ ընտրությունը, նյութական ապահովվածությունն ու դասի ժամանակ դրա կիրառումը, սովորողների վարքը:

57. Ուսումնական հաստատությունում դասավանդման որակը գնահատվում է անցկացրած դասերի համար զինղեկի ստացած միջին գնահատականով:

58. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնական նյութատեխնիկական բազայի վիճակը գնահատվում է.

1) «ԳԵՐԱԶԱՆՑ», եթե առկա են կանոնադրության համաձայն նախատեսված կահավորված սենյակները, վայրերը և կետերը, ինչպես նաև պահպանվում են կանոնադրության բոլոր պահանջները,

2) «ԼԱՎ», եթե առկա են «ԳԵՐԱԶԱՆՑ» գնահատականի համար թվարկված նյութատեխնիկական բազայի բոլոր տարրերը, բացառությամբ հրաձգարանի,

3) «ԲԱՎԱՐԱՐ», եթե առկա են «ԼԱՎ» գնահատականի համար թվարկված բոլոր պայմանները, բացառությամբ ուսումնական հրապարակներից (տեղերից) որևէ մեկի,

4) «ԱՆԲԱՎԱՐԱՐ», եթե ուսումնական նյութատեխնիկական բազայի վիճակը չի համապատասխանում կանոնադրական պահանջներին կամ վարժական զենքն ու տեխնիկան պահպանվում են սահմանված պահանջների կոպիտ խախտումներով:

59. Ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքը գնահատվում է «ԲԱՎԱՐԱՐ» կամ «ԱՆԲԱՎԱՐԱՐ»: Այս դեպքում հաշվի է առնվում սովորողների առաջադիմությունը նախնական զինվորական պատրաստության դասընթացի, արտաուսումնական աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը բազմազան պաշտպանական խմբակների առկայությունն ու զորամասերի հետ համագործակցությունը:

60. Սովորողների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ընդհանուր վիճակը գնահատվում է.

1) «ԳԵՐԱԶԱՆՑ», եթե սովորողների գիտելիքները, զինղեկի անցկացրած պարապմունքների որակը, ուսումնական նյութատեխնիկական բազայի վիճակը գնահատվել են «ԳԵՐԱԶԱՆՑ», պատանիների ֆիզիկական պատրաստության վիճակը՝ «ԼԱՎ», իսկ ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքը՝ «ԲԱՎԱՐԱՐ»,

2) «ԼԱՎ», եթե «ԳԵՐԱԶԱՆՑ» գնահատականի ցուցանիշները «ԼԱՎ» գնահատականից ցածր չեն, իսկ պատանիների ֆիզիկական և ռազմահայրենասիրական դաստիարակության վիճակը գնահատվել է առնվազն «ԲԱՎԱՐԱՐ»,

3) «ԱՆԲԱՎԱՐԱՐ», եթե վերը թվարկված «ԳԵՐԱԶԱՆՑ» գնահատականի որևէ ցուցանիշ գնահատվել է «ԱՆԲԱՎԱՐԱՐ»:

61. Նախնական զինվորական պատրաստության թեմատիկ ստուգում անցկացնելիս ուսումնական հաստատությունը գնահատվում է միայն ստուգված հարցերի համար: Այս դեպքում ընդհանուր գնահատական չի նշանակվում:

62. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, համագործակցելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր սպորտի պետական կոմիտեի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության հետ, ուսումնական հաստատություններում իրականացնում է ուսումնասիրություններ՝ նախազորակոչային պատրաստության մակարդակը պարզաբանելու համար: Ուսումնասիրության արդյունքների հիման վրա կատարվում է վերլուծություն:

63. Ստուգումների արդյունքներով «ԱՆԲԱՎԱՐԱՐ» գնահատական ստացած զինղեկը պարտադիր, արտահերթ կարգով ատեստավորվում է:

64. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ստուգման տվյալներով հանրապետությունում, շրջաններում կազմվում են ստուգման արդյունքների տեղեկանքներ, որոնցից մեկական օրինակներ ուղարկվում են ստուգումներ իրականացնող պետական կառավարման կենտրոնական կամ տարածքային մարմիններ:

65. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ղեկավարումն իրականացնող բոլոր մակարդակների ղեկավար մարմինները կատարում են սովորողների նախնական զորակոչային պատրաստության աշխատանքի արդյունքների տարեկան վերլուծություն և ներկայացնում են ամփոփիչ ամենամյա հաշվետվություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ենթահավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի օգոստոսի 16-ի N145/Ն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարի 2012թվականի օգոստոսի 18-ի N 246 - Ն «Հիմնական, ավագ, միջնակարգ հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, կրթահամալիրներում, նախնական մասնագիտական (արհեստագորխական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների նախազորակոչային պատրաստության կանոնադրությունը հաստատելու մասի» համատեղ հրամանով հաստատված կանոնադրության

Ձև 1

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

_____
ուսումնական հաստատության անվանումը, գտնվելու վայրը

Տնօրեն
_____
Անուն, ազգանուն, երբվանից է աշխատում այդ պաշտոնում

Զինղեկ
_____
Զինվորական կոչում, անուն, ազգանուն, ծննդյան թիվ

_____
կրթություն (ընդհանուր, զինվորական) մինչ պահեստ արձակվելը

_____
զբաղեցրած զինվորական պաշտոնը, երբվանից է զբաղեցնում

_____
զինվորական ղեկավարի պաշտոնը

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Նախնական զինվորական պատրաստությունը անցկացվում է _____ դասարաններում (խմբերում), ուսման մեջ ընդգրկված են _____սովորողներ, այդ թվում_____պատանիներ:

2. Վերջին 3 տարվա ընթացքում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի վիճակը ուսումնասիրվել է (ստուգվել է)

_____
ստուգող կազմակերպությունը, գտնվելու վայրը

_____
ստուգման ժամկետը, ստացած գնահատականը

II. «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՎԻՃԱԿԸ ԸՆԹԱՑԻԿ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ

1. Նախնական զինվորական պատրաստությունը ծրագիրը ստուգման օրը կատարվել է _____ %-ով, դասերին հաճախումը կազմում է _____ %:

2. Սովորողների կողմից ծրագրի յուրացման աստիճանը տնօրինությունը ստուգել է

_____
ժամկետը, ծրագրի բաժինը, դասարանը, ստուգված սովորողների թիվը, ստուգման գնահատականը

3.Տնօրենը ստուգել է զինղեկի անցկացրած _____ պարապմունքը և գնահատել է _____:

4. Ռազմադաշտային պարապմունքները և ինքնաձիգ զենքով հրաձգությունը մարտական փամփուշտներով անցկացվել են (պլանավորվել են)

_____
ժամկետը

_____
գտնվելու վայրը և մեթոդը

5. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի վիճակը քննարկվել է մանկավարժական խորհրդում _____

խորհրդակցության ժամանակաշրջանը

_____
արդյունքները

III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԶԵՆՔԻ ԵՎ ԱՅԼ ՑՈՒՑԱԿԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Ինքնաձիգ_____հատ,
Փոքր տրամաչափի հրացան _____ հատ,
Ձեռքի նռնակ_____հատ,
Ինքնաձիգի ուսումնական փամփուշտներ_____հատ,
Հրամանատարական արկղիկ_____հատ,
Համազորային պաշտպանական հագուստ_____լրակազմ (կոմպլեկտ),
Ճառագայթային չափասարք_____հատ,
Քիմիական հետախուզման զորասարք_____հատ:
Պակասում են՝

_____
թվարկել

_____
նշել պատճառը

IV. ՈՒՍՈՒՄՆԱՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

_____
անվանումը առկայությունը

ծանոթություն
_____

Նախնական զինվորական պատրաստության դասասենյակ
_____

Զենքի պահպանման սենյակ
_____

Հրաձգարան
_____մետր

Ուսումնական համալիր (վայր)՝
Մարտավարության_____

Քաղաքացիական պաշտպանության մարզահրապարակ_____

Շարային պատրաստության հրապարակ_____

Հրաձգության կանոնների և հնարքների կատարման հրապարակ _____

Գործնական պարապմունքի վայրեր_____

Օրապահի_____

Ժամապահի_____

Զենքի մաքրման և յուղման տեղ_____

Մարմնակրթության պատրաստության, ուժային վարժանքների հրապարակ, մարզադահլիճ _____

Մարտական փառքի սրահ (սենյակ) _____

Զենքի հափշտակման դեպքեր_____

երբ է կատարվել, քանակը

_____
տեսակը, պատճառը և հետախուզման արդյունքները

«Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնական նյութատեխնիկական բազան գնահատվում է _____:

V. ՏՎՅԱԼՆԵՐ ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ուսումնական հաստատությունում գործում են
_____

պաշտպանական խմբակներ_____
ինչ խմբակներ են գործում

2. Ավարտական դասարանների (խմբերի) պատանիներից բազմամարտի նորմերը հանձնել են _____:

3. Վերջին 3 տարում ռազմական ուսումնական հաստատություններ են դիմել _____ շրջանավարտ: Նրանցից ընդունվել են _____ մարդ:

4. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի պարապմունքներին մասնակցող սովորողներից իրավախախտումներ են թույլ տվել
_____
_____մարդ
_____
պատճառը, իրավախախտումը

VI . ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

_____
_____

Տ Ն Օ Ր Ե Ն
____ _____201_ թ. _____
ստորագրություն

Ձև 2

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ու Թ Յ Ու Ն

I . ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՎԻՃԱԿԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

_____
ուսումնական հաստատության լրիվ անվանումը, գտնվելու վայրը

Տնօրեն _____
ազգանուն, անուն

Զինղեկ _____
ազգանուն, անուն

_____
պաշտոնավարման ժամանակաշրջանը, երբ է անցել ուսումնական հավաքներ,

_____
որակավորման դասընթացներ

1. Պլանավորումը _____
համապատասխանում է, չի համապատասխանում

_____
ծրագրի պահանջներին

Թերությունները _____:
թվարկել

2. Ծրագրի կատարումը, ստուգման օրը _____
_____%:
Ինչ հարցեր չեն ուսումնասիրվել և ինչու, պատճառները_____
_____:

3. Պարապմունքներին հաճախումների միջինը_____%,
ստուգման օրը՝_____%:
Չհաճախելու հիմնական պատճառներ _____
_____
_____:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

II. «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՈՐԱԿԸ ԳՆԱՀԱՏՎՈՒՄ Է _____ ԱՅԴ ԹՎՈՒՄ ԸՍՏ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ (ԹԵՄԱՆԵՐԻ)

Ծրագրի բաժիններ	Դասարան (խումբ)	Ստուգվել են, սովորողների թիվը	Գնահատականներ.				
			«գերազանց»	«լավ»	«բավարար»	«անբավարար»	Ընդհանուր գնահատական
1							
2							
3							
4							
5							
6							
7							
8							
9							
10							
Ընդհանուր առուգվել է			Սովորող %	Սովորող %	Սովորող %	Սովորող %	

Սովորողները բավարար չափով չեն յուրացրել (ըստ ծրագրի նշել յուրաքանչյուր բաժնի հարցերը)

_____

III. ԲԱԶՄԱՄԱՐՏԻ ՆՈՐՄԱՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ

Ստուգվել է _____ սովորող: Նրանցից նորմաները հանձնել են _____%, այդ թվում՝ պտտաձողի վրա ձգում վարժությունից _____%, վազքից_____%,

Նռնակների նետումից_____%:

Թերությունները _____:

IV. «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՈՐԱԿԸ ԳՆԱՀԱՏՎՈՒՄ Է

1. Պարապմունքների թեման:
2. Դրական, առավել բնութագրական, ուշադրության և տարածման արժանի աշխատանքը

_____

թերությունները

_____

այդ թվում՝ դասի անհամապատասխանությունը

_____

դասի վատ կահավորվածությունը, նյութատեխնիկական բազան թերի

_____

օգտագործելը, դասի դաստիարակչական աշխատանքի բացակայությունը ընթացքում և այլն

V. ՈՒՍՈՒՄՆԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՎԻՃԱԿԸ ԳՆԱՀԱՏՎՈՒՄ Է _____

1.Դրական աշխատանք_____

որն է արժանի ուշադրության և տարածման

_____

և առավել բնութագրական է

2. Պակասում է _____

թվարկել պակաս տարրերը, ամբողջական կառույցները և այլն

3.Թերությունները _____

բացակայում են, չեն համապատասխանում կանոնադրական պահանջներին

_____

թվարկել սարքավորումների թերությունները, նշել զենքերի վիճակը

_____

նշել թերությունների պատճառները

VI. ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԻՃԱԿԸ ԳՆԱՀԱՏՎՈՒՄ Է_____

1. Աշխատանքային պլանի (համապատասխան բաժնի) առկայությունը _____

_____

կազմված է, թե՝ ոչ, թերությունները, դրական,

_____

ժամկետների պահպանումը, միջոցառումների ուղղվածությունը

2. Մարտական փառքի թանգարանների, սրահների, սենյակների առկայությունը և կահավորվածությունը _____

նշել՝ ծառայում են դրանք իրենց նպատակին, թե՝ ոչ,

_____

ինչ աշխատանքներ են կատարվում

Դիտողական, քարոզչական նյութերի առկայությունը_____

ձևավորումը _____

ինչ հարցեր են լուսաբանվում և չեն լուսաբանվում, դրանց

_____

բովանդակությունը, հրատապությունը և այլն

3. Գործնական կապերը զորամասերի հետ _____

_____

կապերի առկայությունը, համատեղ աշխատանքը

4. Կապը այն զորամասերի հետ, որոնցում ծառայում են շրջանավարտները _____

_____

նշել առկայությունը և ձևերը

5. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայից ունեցող պատանիների կողմից իրավախախտումները _____

_____

եղել են, թե ոչ, պատճառները

VII. «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԸ

1. Ուսումնական հաստատությունում արձակված հրամանները «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի վերաբերյալ _____

_____

նշել բովանդակությունը, ժամկետը

2. Մանկավարժական խորհրդի աշխատանքը _____

որոշումները, արձանագրությունները

_____

կատարման ժամկետները և ընթացքը

3. Առարկայական մեթոդական հանձնաժողովի աշխատանքը _____

_____նշել

_____

առկայությունը և հակիրճ բովանդակությունը

4. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման վերահսկողություն _____

դասարանների, ղեկավարների կողմից պարապմունքներին մասնակցելու,

_____

ստուգումներ կատարելու աշխատանքը, վերահսկողության արդյունքները:

5. Ռազմասպորտային տոնակատարության անցկացումը_____

_____

պլանավորումը

_____

նախապատրաստական աշխատանքը, արդյունավետությունը

Ընդհանուր գնահատականը _____

_____

Առաջարկություններ «Նախնական զինվորական պատրաստություն» աշխատանքի բարելավման վերաբերյալ _____

_____

_____

_____

ՍՏՈՒԳՈՂ **(ՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ)**

_____

զինվորական կոչումը, ստորագրություն, ազգանուն

_____

զինվորական կոչումը, ստորագրություն, ազգանուն

_____

զինվորական կոչումը, ստորագրություն, ազգանուն

_____ _____20___ թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՀԻՍՈՒՆԵՐՈՐԴ ԳԱՐՈՒՆԴ, ՔՈՒՅՐԻԿՍ

Տարիներ առաջ էր: Նոր էինք գյուղից տեղափոխվել քաղաք: Նստել էինք սեղանի շուրջը: Համերգ էինք տալիս մեր ծնողների համար Ուսուցչի օրվա առթիվ: Այն համընկել էր մայրիկի ծննդյան օրվան: Ներկայումս մշտապես հաշվվում է հոկտեմբերի 5-ը: Մեր ուսուցչական ընտանիքի համար տարիներ շարունակ այդ օրը կրկնակի տոն էր: Ես հաղորդավար էի, իսկ քույրերս՝ Նինելն ու Մարգարիտան (8 և 9 տարեկան), արտասանում էին իրենց ստեղծագործությունները: Ծնողներս լսում էին մեզ և ոգևորում իրենց ծափերով: Առաջին թղթակցությունս «Արտուտիկ» մարզային ռադիոհաղորդմանը տվեցինք և «Պիոներ կանչին»: Եթերում երեք քույրերով հանդես եկանք և մրցանակներ ստացանք (մանկական հեքիաթներ):

Երջանիկ օրեր, երջանիկ պահեր ու անվերադարձ թախիծ... Մանկության անհոգ երազներով լեցուն հուշեր... Ո՜ւր է թե հետ գային, նորից նստեինք սեղանի շուրջը ու լսեինք մորս՝ երջանկահիշատակ Թամարա Սարգսյանի խորհուրդները... Գոնե մխիթարվում ենք նրանով, որ հայրս՝ մեծագույն մանկավարժ Մ. Շահնազարյանն է կողքներիս իր խորհուրդներով: Եվ մեր հաջողությունները միշտ նվիրում ենք նրան ու մորս:

Պատկերացնո՞ւմ ես, մեր ներկա հնարավորությունները մեր մանկավարժական կյանքի սկզբում լինեին: Ափսոսում ես, բայց ինչ արած...

Եվ հիմա դու հոբելյար ես, լրանում է 50 գարունը քո:

Կարծես երեկ էր, երբ մենք չորս քույրերով սովորում էինք մայրաքաղաքի Ե. Չարենցի անվան հ. 7 միջնակարգ դպրոցում: Մայրիկս իմանալով, որ իր սիրելի ուսուցչուհի Ս. Խաչապետյանը դասավանդում է այդ դպրոցում, մեզ տարավ այնտեղ: Այնուհետև յուրաքանչյուրս ընտրեցինք մեր ուղին: Ես՝ կենսաբանություն և քիմիա, իսկ դու, որ միայն ֆիզկուլտուրայի պատճառով ոսկե մեդալի հավակնորդ չդարձար, ընտրեցիր ֆիզիկա առարկան: Ինչքա՜ն էր նեղացել ընկեր Խաչապետյանը, երբ քննական հանձնաժողովում ճանաչելով քո շարադրությունը, իմացել էր, որ ֆիզիկայի բաժնի դիմորդ ես: Առայսօր դու սիրում ես գրականությունը, ստեղծագործում ես, կազմակերպում գրական երեկոներ՝ նվիրված քո սիրած առարկային՝ ֆիզիկային: Հիշո՞ւմ ես առաջին ստեղծագործական երեկոն Ստեփանակերտի հ. 21 ՊՏՈՒ-ում: Մրցում էիր մայրիկի խմբի հետ: Մենք մեր մանկավարժական մկրտությունը ստացանք դժվար տարիներին: Դու մայրիկի հետ էիր մի կոլեկտիվում, ես հայրիկի հետ՝ Իվանյանում:

Արցախյան շարժման առաջին օրերին դու՝ քույրիկս, ցասումնալից նամակ հղեցիր «Կոմսոմոլսկայա պարվդա» թերթին՝ միամտաբար հավատալով, որ այն կտպեն թերթում, ու մարդիկ կիմանան, կճանաչեն, թե ով է թուրքը: Պատասխանեցին, թե եղբայրական ԽՍՀՄ-ում անհնար է պաշտպանել մեկին, դատապարտել մյուսին, որ բոլոր ազգերը միահավասար են:

Միամիտ օրենք, պատերազմը միանգամից ամեն ինչ դրեց իր տեղը:

Աշխատանքի անցար հ. 2 միջնակարգ դպրոցում: Մեր հանդիպումների ընթացքում ի՜նչ խանդավառությամբ ու գորովանքով ես խոսում ընկերներիդ, տնօրենության մասին: Անցած ուստարում կազմակերպեցիր «Ուրախ ֆիզիկա» ցերեկույթ, որի ընթացքում քո սաները ցուցաբերեցին իրենց գիտելիքները ֆիզիկայից: Միասին ստեղծագործեցիք, նորից բանաստեղծություններ գրեցիք: Քո մեջ արթնացավ մուսան, նա չէր էլ քնել, որովհետև միշտ էլ դժվար կամ ուրախ պահերին դու ստեղծագործում ես: Դա այդպես պետք է լինի, քանզի ֆիզիկան ու լիրիկան միշտ կողք կողքի են:

Դու հիմա հոբելյար ես, բայց մեզ համար նույն երկար ծամերով, ռոմանտիկ հայացքով, ժպտերես, հանգիստ, շատ դժվարությամբ վրդովվող մեղմաբարո, պրպտուն մտքով, քույրերիդ համար քաղցրիկ քույրիկն ես, հորդ հպարտությունը, ապագա երկու զինվորներիդ անուշիկ մայրիկն ես, զարմուհիներիդ համար խորհրդատու մորաքույրը, ամուսնուդ համար սիրող և համբերատար կողակիցը:

Մտովի զրուցեցի հետդ, չցանկացա խորանալ մանկավարժական գործունեությանդ մեջ, քանզի գիտեմ, որ դու միշտ նորն ընդունող ես և չես բավարարվում ձեռք բերածով:

Տարիների երազանքդ իրականություն է դառնում: Դպրոցում մտցվում են շախմատի դասընթացներ: Ուսանողական տարիներին միշտ մասնակցում էիր մրցույթներին: Հետո դա երկրորդ պլան մղվեց: Գուցե այս ժամանակաշրջանում մրցաշարերին նորից հաջողության հասնես կամ նոր շախմատիստներ պատրաստես:

Շնորհավոր ծնունդդ, եղիր երջանիկ, առողջ, միշտ շրջապատված բարեկամներով, հարազատներով և ընկերներով: Նորանոր հաջողություններ ու վերելքներ քեզ:

Քո քույր՝ Մարիեփա Շահնազարյան
Իվանյանի միջնակարգ դպրոց

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԱՆԽՈՆՋ ՄՇԱԿԸ

Որտեղ ուսուցում կա, այնտեղ առկա է մեթոդիկան, ինչը սովորեցնում է ուսուցման ձևեր, մեթոդներ, եղանակներ, ուղիներ ու միջոցներ: Անշուշտ, այս ամենի ծեռք բերումը տրվում է ի վերուստ: Նախախնամությունը Աիդա Դավթյանին դասել էր արդեն այն մանկավարժների շարքը, ովքեր գի-

տությունների թագուհու ճշմարիտ արվեստը ճշմարիտ ուղով առաջնորդում են դեպի մատաղ սերնդի հոգու խորքերը, ինչու չէ նաև՝ ուսուցիչների: Ուսուցման ու դաստիարակության գաղտնիքների գիտակ, ուսուցչին բուժիչ դեղատոմս հրամցնող, ժամանակակից մանկավարժական մտածողության ջատագով Աիդա Դավթյանն իրականություն է դարձրել իր սրբազան երազանքը՝ նվիրվել է մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործին:

Լրացել է բազմավաստակ մաթեմատիկայի ուսուցչուհի, Հադրութի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցի ուսումնական մասի գծով տնօրենի տեղակալ Աիդա Դավթյանի ծննդյան 50-ամյակը: Ծնվել է Հադրութի շրջանի Կարմրակուճ գյուղում: Ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի բաժինը: Տքնաջան մանկավարժական աշխատանքի շնորհիվ արժանացել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալի:

Նկատելի են տիկին Աիդայի եռանդուն քայլքը դասարանից դասարան, մաթեմատիկայի ճամփաբաժաններում աշակերտներին վստահելի ուղիներով առաջնորդելու ձիրքը, ուսուցիչներին (ոչ միայն մաթեմատիկայի) ժամանակի պահանջներին ու խնդիրներին ծանոթացնելու, դրանք կիրառելու գաղտնիքները:

Երեք տասնամյակ շարունակ սաների սեփականությունն է դարձնում Շիրակացու ուսմունքը, մոտ երկու տասնամյակ վերահսկում ուսումնական գործունեությունը դպրոցում, ուսուցիչներին մղում ստեղծագործական որոնումների՝ արդյունավետ դարձնելու ուսուցումը, կիրառելու մեթոդիկա, որն ապահովում է գործնականություն: Այսօր շնորհավորում ենք գիտելիքների շտեմարանի փակ դռները սաների առջև բացող, «հոգևոր ոսկի» մատուցող հոբելյարի 50-ամյակը, ցանկանում շքեղ ու հրեղեն լույսով ողողված ճանապարհ, ազնվական ձգտումների հավերժական հաղթանակներ:

Հադրութի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

Ո՛Չ՝ ՎՆԱՍԱԿԱՐ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Անգլիացի իմաստասեր Ջոն Լոքը պնդում էր, որ երեխան ծնվում է որպես տաբուլառասա (անգրել, մաքուր տախտակ), և եթե նրանից հետագայում ինչպիսի մարդ կձևավորվի՝ կախված է շրջապատից:

Բազմիցս նշվել է ծխախոտի վնասակար ազդեցության մասին, այնինչ մեր ընտանիքների մեծ մասում ընտանիքի հայրը հանգիստ ծխում է հյուրասենյակում՝ օրինակ հանդիսանալով իր երեխաների համար: Հաստատված փաստ է, որ ծխողը վնասում է ոչ միայն իրեն, այլև շրջապատի մարդկանց: Այն մարդը, ով մեկ ժամ լինում է ծխած սենյակում, թունավորվում է նույնքան, որքան չորս գլանակ ծխածը: Ծխախոտի ծուխը պարունակում է շուրջ 4000 քիմիական միացություններ, որոնցից 40-ը օժտված են քաղցկեղածին հատկությամբ: Ծխախոտը բացասաբար է ազդում սրտանոթային համակարգի վրա, նպաստում սրտամկանի ինֆարկտի առաջացմանը: Ծխելը մեծացնում է նաև շաքարախտի զարգացման ռիսկը, թոքերում, ավշային հանգույցներում, և ներզատական գեղձերում կուտակված ռադիոակտիվ նյութերը նպաստում են տղամարդկանց սեռական անկարողության առաջացմանը, իսկ կանանց՝ անպտղաբերությանը:

Հասարակական այս չարիքի դեմ պայքարելու գործում, իհարկե, կարևոր դեր ունեն նաև դպրոցի ուսուցիչները, նախադպրոցական հիմնարկների դաստիարակները, սակայն ընտանիքն այն հիմնական օղակն է, որտեղ պետք է ձևավորվեն օգտակար, և մերժվեն վնասակար սովորությունները: Ծնողները պետք է միշտ հիշեն, որ վատ օրինակը շատ վարակիչ է, այն միշտ ավելի շուտ է ընդօրինակվում երեխայի կողմից:

Ներկայումս սպառնում է «ազգային չարիք» դառնալ մեր ազգին անհարիր մեկ այլ վնասակար սովորություն՝ ալկոհոլամոլությունը, և որքան էլ ցավալի է, այն տարածվում է մեր երիտասարդության շրջանում: Դրան նպաստող գործոններ են ալկոհոլային սովորություններն ընտանիքում, վատ հարաբերությունները ծնողների միջև, ծնողներից մեկի բացակայությունը, կուլտուրական ցածր մակարդակը, ազատ ժամանակի աննպատակ օգտագործումը, սքրեսային իրավիճակները և վերջապես՝ նորից վատ օրինակը:

Բացահայտված է, որ գողությունների 55%-ը, բռնությունների 69%-ը կատարվում է հարբած վիճակում: Խուլիգանական արարքների 80%-ը բաժին է ընկնում դեռահասներին: Հարբեցողության և ալկոհոլամոլության հետ է կապված մանկական հանցագործությունների 75%-ը: Այս թվերն ավելի քան խոսուն են ու վկայում են, որ ալկոհոլը սոցիալական չարիք է, որը ներսից քայքայում է մարդուն՝ հսկայական վնաս հասցնելով հասարակությանը: Ցավոք, ալկոհոլամոլությունը կարող է տանել դեպի թմրամոլություն ու թունանյութերի օգտագործում:

Այո՛, թող զարմանալի չթվա, վնասակար այս սովորույթը ևս սկսվում է ալկոհոլի ու ծխախոտի օգտագործումից: Թմրամիջոցների նկատմամբ հակումը չի զարգանում հանկարծակի, դա երկարատև շրջան է, և այստեղ նույնպես առաջին հերթին տուժում են երիտասարդները: Հետաքրքրությունը, հասակակիցների շրջանում նրանց նմանվելը, չկշռադատված արարքները հատկապես բնորոշ են պատանիներին: Այստեղ դարձյալ իրենց ծանրակշիռ դերն ունեն ծնողներն ու ուսուցիչները: Առողջությունը մարդու կյանքի գլխավոր նպատակն է, այն հնարավոր չէ գնել, այն պետք է երեխայի կյանքի առաջին իսկ օրերից պահպանել, պաշտպանել հիվանդություններից: Ավելորդ չեմ համարում մեջբերել Շոպենհաուերի խոսքերը. «Առողջությունը դեռ ամեն ինչ չէ, սակայն ամեն ինչը ոչինչ է, եթե չկա առողջություն»: Ինչպես նշում է ակադեմիկոս Յու.Պ. Լիսիցինը, առողջության առաջնահերթ պայմանը առողջ կենսակերպն է, որին բաժին է ընկնում բոլոր գործոնների շուրջ 50-59%-ը: Մարդու առողջության վրա էկոլոգիական գործոնների ազդեցությունը կազմում է 20-25%, կենսաբանականը (ժառանգականը)՝ 20%, արատներն ու թերությունները՝ 1%: Դժվար չէ տեսնել, որ մեր երեխաների առողջությունը մեր ձեռքերում է: Եկեք նպաստենք մեր երեխաների առողջության պահպանմանը, զերծ պահենք նրանց վնասակար սովորություններից: 21-րդ դարում մարդը բոլոր հիմքերն ունի ապրելու 120-160 տարի...

Կյանքի վաղ օրերից երեխայի մարզումը, գործառական հնարավորությունների ամրապնդումը, հնարավորություն կտան դաստիարակել կայուն նյարդային համակարգով, ֆիզիկապես ամուր, անբարենպաստ պայմաններին դիմակայելու պատրաստ անձնավորություն: Այս գործընթացում իրենց կարևոր դերակատարումն ունեն ընտանիքը, դպրոցը, հասարակությունը:

Սուսաննա ԱՂԱՍՅԱՆ
ԱրՊՀ կենսաբանության ամբիոնի դոցենտ, կենս. գիտ. թեկնածու

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ

այդ գյուղը շատ է հեռու աշխարհի կյանքից: Նույնիսկ խղճալ կարելի է այն կանանց ու երեխաներին, հատկապես աղջիկ երեխաներին, ովքեր իրենց հագ ու կապով զրկված էին անգամ արևից, զրկված՝ ազատությունից՝ թշվառ կենցաղի մեջ: Մեր հանդեպ անտարբեր էին, բայց և հետաքրքրվող հայացքներով, աղջիկներից մեկն անգամ բարձրաձայնեց ծիծաղելով, թե դուք շատ գեղեցիկ եք, իսկ մնացածը «մանի-մանի» ասելով, լուռ փող էին ուզում: Անգամ մի բաժակ ջուր տալով, փողի էին սպասում: Կանանցից մեկը բարեպաշտություն արեց `հաց-լավաշ ուղարկելով մեզ, իսկ տղամարդկանցից մեկն էլ օգնեց վարորդին՝ մեքենայի անսարքությունը շտկելու համար: Այդ գյուղն իր մահմեդական կենցաղով ու մոլեռանդությամբ տիպիկ մի բնակավայր էր ներկայանում: Անմիջապես վանքին կից նրանց տներն էին, մեր քանդված վանքի հայատառ ու զարդանախշ քարերով ու խաչքարերով կառուցված, նրանց տների անգամ հենքային քարերն էին հայատառ ու խաչքարերով...

Մեզ ծանոթ ու անծանոթ մտածողության ու աշխարհընկալման մտքերի խառնուրդ կար այստեղ: Ուրիշի տունը քանդելու և իրենց տունը շենացնելու մտածողության խառնուրդը և... գիտակցաբար տառերն էլ, խաչքարն ու զարդանախշերն էլ այնպես էին ագուցված իրենց պատերին, որ նայում էին աշխարհին... ասես եկողներին ի ցույց դրված լինեին...

Եվ Արածանի՜ն է, հայոց սուրբ գետը, Եփրատի ամենից մեծ վտակը: Այս գետում է, որ 301թ. Հայոց Տրդատ 3-րդ մեծը Հայոց իշխանավորներն ու ժողովուրդը մկրտվեցին, և առաջինը աշխարհում Հայաստանում պետականորեն ընդունվեց քրիստոնեությունը: Լվացվեցինք սուրբ գետում, աղոթք մրմնջացինք, արցունքներ հեղեցինք ամրակուռ կամրջի քարերին, որտեղ լեգենդն էր զարկվել՝ Գևորգ Չաուշը...

Եվ Արածանիի ափին, կամրջի վրա արցունքներով ու հայի հպարտության ծովից ծնված «Քոչարին» պարեցինք: Տիկին Գրետա Գրիգորյանի ծննդյան օրը ծիծաղով ու խինդով նշեցինք, ամենից երջանիկ ծննդյան օրն էր դա, հայոց սուրբ գետի՝ Արածանիի կոհակների երգի ներքո: Պարում, երգում էինք ոգևորությամբ, խենթերի պես, իսկ թե ինչ էին մտածում կողքից մեզ նայող այլազգիները, թող մտածեն, թող գոնե մի պահ մտածեն. ովքե՞ր են այս խենթ ծռերը, որ հաշվի չառնելով մեզ՝ իրենցն են երգում, իրենցն են պարում՝ անթաքույց ու տիրաբար»...

Հյուրի պես... հարկադրված էինք հրաժեշտ տալ սուրբ Արածանիին՝ վստահեցնելով, որ կգա հայի հավերժական շուրջպարի և Քոչարիի օրը այդ կողմերում, մեր կողմերում, Լաոյի էրգրում...

Իրիկնային էրզրումը, մեր հայկական Կարին քաղաքը, ներսում մոլեռանդ, մուսուլմանական կենցաղով, արտաքուստ լուսաշող ու պլպլան գույներով՝ անհոգական, մտքերով դեպի արևմուտք... Ապշած, զարմացած էինք Կարինի բերդի անառիկությամբ, ծավալով, իսկ բերդին հարակից հայկական թաղամասերն էին, տները՝ կամակարակապ պատուհաններով, քաղաքի նորօրյա ձևի ու պատկերի մեջ միայնակ ու լքված, խեղճացած... տերերը չկային, կային կողպված ու քանի՜ տարի այդպես կախված մնացած կողպեքները... Ասում էի, չէ՞... Ավելի ծանր ու սարսափելի իրողության հանդիպելու էինք. Կարինի բերդի ներսում ամրակուռ, սրտաճմլիկ ու հարազատ ձայնով ու պարերով մեզ իրեն կանչող եկեղեցու գագաթին՝ տախտակի մի կտուր փակցված ու անամոթաբար վրեն զետեղված. «Բիզիմ մեչիդը (մեր մեչիդը): Բայց որտե՞ղ են աշխարհի կարգուկանոնը պահող ատյանները, թե՞ էլ, ինչպես միշտ, մեզ վերաբերող բոլոր հարցերում քնած է աշխարհը: Վրդովմունքը ծնում է ատելություն, ատելությունը՝ ուժ, հպարտություն և ճիշտ կողմնորոշվելու դաս... Ազգային, հայկական ճշմարտություն ու Հայ Դատի արդարության, պետական մակարդակով քարոզչության ուժեղացման դասը... Ինչպես որ Հին Զուղայի հազարավոր անզուգական ու անձեռակերտ խաչքարերը մեր քթի տակ, մեր աչքի առջև փոշի ու ավազ դարձրին՝ լցնելով Արաքս գետը, նույնպես և էրգրի վերջին մասունքներն են մեռնելու կամ օտարի սեփականությունը դառնալու, որ այլևս է... Պինդ ու ղայիմ բռնենք ու ամրացնենք մեր նվաճումը, մեր պետականությունը՝ Հայաստանի Հանրապետությունն ու հայիս հետագա ճակատագրի ոստան՝ թուրքից ազատագրված Արցախը, պինդ ու ղայիմ պահենք մեր դրոշները, պաշտենք ու պահպանենք դրանք՝ զգալով ու գնահատելով, որ դրանք են մեր ազգի հարատևման անգնահատելի արժեքները...



Վանա լիճ

Լուռ ու անտարբեր, հավատքին ու կրոնին հլու-հպատակ (նրանց գոյության և հզորության առաջին հրամայականը), թուրքն անում է իրենը, երջանիկ լինելով, որ թուրք է, իսկ թրքուհին էրզրումի փողոցներից մեկում մեզ շնորհավորում է բայրամի առթիվ և բարձրաձայնում. «Շքյուր ալլահա, ման թուրքյում» (փառք աստծուն, որ ես թուրք եմ...):

Հայկական Կարինս մնաց հեռվում, դեպի Արդվին ձգվող սարերից այն կողմ:

Անցել են օրեր, տպավորություններն այրող են ու թարմ: Բայց մի զգացում կա իմ ներսում, որ այնտեղ ասես այստեղ էինք, մերն էր ամեն ինչը ու հարազատ, և մեր ոտքը ամուր էինք դնում ու քայլում մեր հողերում... Եվ նաև այն, որ Կարսն էլ, Անին ու Իգդիրն էլ, Վանն ու Ծովակն էլ մոտիկ են, շա՜տ մոտիկ, այստեղ, մեր կողքին, մեր շարունակությունը, և նրանք՝ ավերակներս ու փշրանքները էրգրիս հրամայում են. «Որտեղ պետականություն, այնտեղ էլ՝ հայրենիքի, պապենական երկրի զորեղացում և հզորություն: Պինդ պահենք թեև փոքրիկ, բայց աշխարհին ներկայանալու և հարատևելու հայի անձնագիրը՝ հայոց պետականությունը: Ազգովի վարենք ճիշտ քաղաքականություն, ազգային քարոզչության մեքենան աշխատեցնենք, լաոյի հայոց էրգրում նահատակված հազարավոր ռուս և հայ գեներալների ու մարտիկների անունից մշտապես թարմ պահենք հիշողությունը, չէ՞ որ հիշողությունն ու դասն այդ հիշողության հավասարապես հարկավոր է և՛ ռուս, և՛ հայ ժողովրդին, որ Ախուրյանի ափին, հայացքով դեպի մեզ իրար հավատարիմ և ամուր կանգնեն, մի բարեպատեհ օր էլ մտածեն Ախուրյանն անցնելու մասին...

Խնդրում եմ՝

Սպասիր, էլի սպասիր, քիչ էլ սպասիր, դո՛ւ իմ Սրբատուն, դո՛ւ իմ պապերի Հայաստան՝ գետի այն ափին...

Խորին շնորհակալություն ուխտագնացությունը նախաձեռնող ու կազմակերպող Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժնին և բարերարներ, հովանավորներ Էդուարդ Վերդյանին, «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ին, «Քարավան» ՍՊԸ-ին, «Վիրաժ» ԱԿ-ին, SBS ՍՊԸ-ին, ԱԺԿ-ին, «Նադեժդա» հանդիսությունների սրահին:

Լաուրա ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Ակեփ. Ա.Ղուլյանի անվան
ի 2 դպրոցի տնօրեն

ՇՈՒՇԻԻ ԿԻՐՃՈՒՄ

Ճիշտ է, ես 9-րդ դասարանից դուրս եմ եկել Բերձորի Վահան Թեքեյանի անվան միջնակարգ դպրոցից և ուսումս շարունակում եմ Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի քոլեջի դիզայնի բաժնում, սակայն մտովի միշտ իմ դասարանի հետ եմ, իսկ Բերձոր գալուս դեպքում այցելում եմ դպրոց, մասնակցում դասերին: Վերջերս մեր դասարանցիները որոշել էին այցելել մեր երկրի որևէ գեղատեսիլ կամ պատմական վայր: Հայրս, որ լավ է ճանաչում Քաշաթաղի և Շուշիի շրջանները, առաջարկեց մեկօրյա հանգիստն անցկացնել Շուշիի կիրճում՝ Հունոտի ձորում, որտեղ պահպանվել են հնամենի տներ, կամուրջներ: Մեր դասղեկի և առաջին ուսուցչի հետ Սայաթ քեռու մեքենայով դուրս եկանք Բերձորից և հասանք Մխիթարաշեն կոչվող գյուղը: Այստեղից ճանապարհը պետք է շարունակեինք ոտքով: Նախորդ գիշեր տեղացած անձրևից ճանապարհը ցեխապատ էր, բայց եղանակը բարենպաստ էր: Մեզ դեպի Հունոտի ձոր ուղեկցեց Մխիթարաշենից Սևակ անունով մի երիտասարդ: Ընտրեցինք մի բացատ, որտեղ պետք է հանգստանայինք: Սակայն շտապում էինք

որպես առաջ տեսնել Հունոտի ձորի հրաշքներից մեկը՝ հավերժ կանաչ քարանձավը, որի վրայով ջրվեժ է իջնում: Մի արահետով շարժվեցինք առաջ: Ճանապարհի մի մասն անանցանելի էր, և ստիպված անցնում էինք Կարկառ գետի միջով: Վերջապես հասանք տեղ. երկու գերան գետի ափերը կապում էին իրար: Մտնում ենք քարանձավ: Դարերի ընթացքում բնությունը գեղատեսիլ ու հետաքրքիր քանդակներ է արել քարանձավի առաստաղին ու պատերին: Ներսում էլ կարծես անձրև էր մաղում, իսկ քարանձավի մուտքը պատված է ջրե վարագույրով: Երկար ժամանակ ուսումնասիրում էինք քարանձավը, տարածքը, լողացանք գետում և վերադարձանք հիանալի տպավորությամբ: Իր վեհությամբ ու գեղեցկությամբ ավելի հմայիչ էին կիրճի ուղղաձիգ, բարձրաբերձ ժայռապատերը, որոնք նաև արծվաբներ են: Գետի ձախակողմյան ժայռապատից չնայած բարակ, բայց գեղեցիկ ջրվեժ է իջնում, իսկ քիչ ներքև միջնադարյան բերդապարսպի երկու բուրգ առավել գեղեցիկ ու տպավորիչ են դարձնում տեսադաշտը: Այստեղ նաև քարե կամարակապ կամուրջ կա, որտեղով ժամանակին Վարանդայի զինվորներն ու բնակիչները դեպի բերդ են բարձրացել: Մի պահ պատկերացնում եմ, թե ինչպես էին 1992 թվականի մայիսի 8-ին հայոց քաջերը բարձրանում ժայռն ի վեր և մեր պատմական հայրենիքից դուրս քշում թշնամուն: Հայրս ասում է, որ նաև այլ ուղղությամբ էին գրոհում հայոց քաջերը: Օրը մոտենում է ավարտին. դուրս ենք գալիս Շուշիի կիրճից՝ տպավորված գեղատեսիլ բնությանբ ու մեր պապերի կառուցած կամրջով, քարե տանիքներով շինություններով: Բայց մեր էքսկուրսիան շարունակվում է: Հաջորդ կանգառը Շուշի քաղաքի Ջըդըրդուզ կոչվող տարածքն էր: Հազարավոր սպիտակ ծաղիկները, հիմնականում երիցուկներ, չքնաղ տեսարան էին ստեղծել, իսկ վերևից արդեն այլ կերպ էր դիտվում կիրճը: Սպիտակ ծաղիկներից ծաղկեպսակներ ենք հյուսում, լուսանկարվում: Մայրամուտին Շուշիի Ղազանչեցոց եկեղեցու գմբեթը վառվում էր արևի վերջին շողքերի մեջ ու բոլորիս հուշում, սա է մեր երկիրը. այստեղ է կերտվում մեր ապագան:

Անահիտ ԸՌՔՈՅԱՆ

ԼՈՒՍԱՐԱՐ
Խմբագիր՝
ՍՎԵՏԼԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար» ՓԲԸ

✉ Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3215: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 01.06.2012թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: